Այդ օրը որչեզիք ազատ ժամանակի մի մասը արամազրելի շափածոյ տոգեր գրելու: Գաղութան անձնակազմ, ներքին իմաստ ունէր եւ արտաքին որիւէ նպատակ չէր Հետապնդում: Թէեւ բնականօրէն ու նպատաւոր պայմաններին առկայութեան զեպրում անհաւանական չէր լինի եւ անանձնական ժողովուրդ: Վազուց ծանօթ լինելով Քորջ Բայրոնի այն խօսքին, թէ «Մարզու սիրտն ու ջրագոցաբարբ սմամ են իրար, երբ ազալու բամ յեմ արմենում» իրենք իրենց են ազուն, ինչու էլ Համազում լինելով գրանում, «իմք գրի ե՞րբ ինչ-վերս կոչուող տեսարանները շարքին, մինչեւ 1946ի ամառը զբաղուելով գրանում» ամենից տուով պարզ առաջնական նկատառումով: Բայց յետոյ տաշահանարար նկատեցի, որ առաջնականակա՛նն էլ ինքնարեքարար երկա իր Հակառակ կողմին է վերածուում, երբ բացակայում են Համապատասխան ներքին ու արտաքին նախադրեանները: Սուտի, ի վերջոյ, Հրատարու եցի նաեւ իմ յանպատասխան փորձերից:

Արդ, ուրիշները, երբ որիւէ գրոյցի ու խօսակցութեան առիթ չուներին, նստում եւ խոզում էին շաշիի, շախմատ, մանուսանդ թղթախաղ, եւ այլն: Ես չէի կարող ժամանակ յատկացնել գրանց, ինչ յայտնի պատճառներով: Մնում էր կարգալ, որը նայնպէս անկարելի էր շքնահատուող գրազմուք գործնել: Հետեւ ապէւ, Հարկաւոր էր գրան նաեւ զգրել խառնել, ո՛չ միայն օրագրան լին-ժակերեսային, այլեւ՝ աւելի Համապարփակ եզանակով:

Յունուարի 9ին կայանցիներն Հրաւիրու եցինք մանակցելու նապատանակի որսի: Նախապէս բացատրուեց որսի պայմանները: Բուն որսորդները Համարբի Համազդեսաւորներն էին: Մեզինց իւրաքանչիւրի ձեռքը երկու փայտիկ առէին եւ պատու իրեցին, որ ազատչան ու Հրահանգ ստանալու ղէպքում փայտերն իրար գարկենք, լքելը ինչպէս ենք, նապատանակներին բնեղից իրանեցնելու Համար:

Համակներոնացման Համարբի պետ Հեռուք իր անձնակազմով միացում էր: Ձիւն էր տեղում եւ ցուրտ էր: Սպասում էինք, ըստ նախնական կարգադրութեան, պետին, որն ուշանում էր: Մերոնք անհանդիսաւ էին ու միմեանց Հարցնում էին, թէ որսի՞ց մնաց այդ մարդը: Մէկ էլ տեսնենք կամուրջին մօտ ճանապարհի վերելքով մեն-մենակ բարձրանում է Հետսն ինքք, որսորդ ական սպասադիւնութեամբ: Միւսներին Հետու էր թողել, ըստ որոյ Հարակարգի: Միւս Հաւասակ էր, նիհար եւ ժպտում ու կարծես թէ տակ զուարճանում էր, որ մեզ զբանկարծակի բերեց: Այդ ժամանակ չէի կարող կուսնել, որ շորս տարի անց նա պիտի կատարի Հենց Առաջնիցի երեմեանի Համարբալարում, իսկ կրակովի բանասում գրան նրա ինքնակենսագրութիւնի՞ց պիտի տեղեկանամ, թէ ով է եղել ինքը եւ ինչ ճանապարհ անցել:

Այդ օրը կատարեցինք Հինգ շուրջկայում: Մէկը վերջնապէս յետոյ քայլում էինք որոյ տարածութիւն եւ նորն սկսում: Վերջում տեղեկացանք, որ խփուել է 130ից աւելի նապատակ: Վերադարձին որոյ տարածութիւն կարեցինք գինուարական Հակայական սայլերով: Այդ օրը գրեցի Հետեւեալը. «Հան-նիլի աճցաւ, երբ միւս աճգամ չկրկնուի»: Իրականում չկրկնուեց: Ծունուարի 10ին մեր աննեականից Վարազդատը, ըստ որոյ պայման-



Նաւորուածութեան, պարեաթի եւ ռազիո-հրահանգչի հետ մեկնեց Բեռլին, Մուրազիանի կողմից ինչ-որ տեղ տեղաւորուելու նպատակով: Այդ ընտրութիւնը ինքնին բուռնական անսպասելի էր, բայց դա՛ էր իրողութիւնը, երբեք բերմամբ:

Յունուարի 15ին Բեռլինից վերադարձան պարեաթը զբոսնելու: Կայանի հետ գոյ կապութեան վերաբերեալ: Յայանից, որ մեկնեց յետոյ լուծարքի կ'ենթարկուի կայանը, քանի որ այժևս նորից չեն ընդունուի: Ընդհանուր ասածք, խիստ յոռետեսական էին նրա խօսքերը:

16ին դիտեցինք Բրեսլաւից հիւրաբարի եկած թասարանի ներկայացուցիչները՝ Լայնց Շտրուպիայի և իւր գիծին հիմ տիկ մէջ: Ձկարողացածք բարարք չափով հաղորդակցուել, աստիկն հերթին լեզուի պատճառով:

18ին, ասուածեան, վեց բարձրաստիճան համազգեստաւորներ կայան այցելեցին եւ ասորիք խօսքերի հետ անձուհեցին, նաև հայերի: Չունազան հարցեր էին տալիս, որինակ՝ Հայ-ուսական յարաբերութիւններէ մասին, պատասխանները նշուի իրենց ծառայութեան միջոցով, ինչպէս ասուեմ է, պարզ էր, անկաշկանդ եւ գործնական: Նրանք գործուածք էին եկել, վերահանուական աստիղարաններով, եւ հետաքրքրուեմ էին շատ բաներով:

Յունուարի 22ին 50 հոգեանց մի խումբ Բեռլին մեկնեց՝ չըլազայութեան: Այդ օրերին, ամէն ասուտ անխորք, մեկական ժամ շարալին պարպուածքներով էինք զբոսնում, իսկ 22ին էլ՝ ժամ 10 կիրովորանց երթ կատարեցինք:

Յունուարի 19ին Բեռլինից վերադարձաւ Վարդգաւար: Մուրազեանին պարտաւորութեան հարց կար եւ վերահան անորոշ էր: Մի շարք ասորիայ գրուածքներ էր պատճառ տարածեց: Յիշողութեան մէջ մնացել է մանաւանդ ա՛յն, թէ Մուրազիանի աստից մայրը ինչպէս է գօղոհել, ասելով՝ «Աստու բարի յո՛յսն էլ վերացուեմ, ակնյայտելն նկատի տանելով եզրեմանական բարեխաւ տիրապետութեան պարագան, ասանական զբարի լոյսի փոխաւրելն»:

Ասուեմ էր նաև, թէ այնտեղ եւս վրացիներն իշխուեմ են, այս անգամ շեղակասեան կոմիտէի անունով: Հայերը չէին կարողանուեմ նրանց հետ շափուել ու հաստատ գիրք ունենալ:

Միտածանակ ասաց, թէ մի քանի հոգու պիտի յանձնարարուի որեւէ արդիական նիթ շարք ասու մտախորութիւն գրել՝ Բեռլին ու գործելու համար: Գրիգորը ասանմանց գրականութեան բարձր: Իմ նիթն էր շէտաւտանի յանակամ եւ տմտեսական հնարաւորութիւնները: Այդ ակնարկը պատարասեցի, յանձնեցի, բայց այնպէս էլ անյայտ կորաւ, չգրեանք որտեղ:

Քէն ակնարկը գրելու համար ոչ ոքի օգնութեան կարիք չունէի, բայց հարեանցիորէն գիտեցի Յովհաննէսին, որոջ հարցերի կապակցութեամբ, քանի որ նա լրացին անանասութեան երեւանեան վարչութեան մէջ էր ծառայել: Բայց նա ոչ մի նորութիւն չասաց, գրա փոխարէն միայն գոյն խորհրդային տարիներէ ձեռքբերուեմ էր: Եիմի որ արուել է՝ խորհրդային օրո՛ք է արտաբերել: Ա. Ե. Ե. նա խիստ բացասական կարծիք ունէր հայերի պետական ճանապարհութեան մասին, ի ասորիքութիւն վրացիներէ, պնդելով, թէ դա միայն իր սուտութեան մասին, ի ասորիքութիւն վրացիներէ, պնդելով, թէ դա միայն իր սուտութեան մասին, ի ասորիքութիւն վրացիներէ, պնդելով, թէ դա միայն իր սուտութեան մասին: Քէն ակնարկը միայն ասորիք էր անկէտներ ունէինք: Արտական Տիգրանեանին: Քէն ակնարկը միայն ասորիք էր անկէտներ ունէինք: Հետագայում եւս եւ Յովհաննէսը յանախ եւս ունեցել վիճակով զբոսնելու ասորիքներ:

Յունուարի 26ին բնակարան էր ցուցակ, որի մէջ մանուկները կ'ըմբակայ

էին մեկնուի, այդ թուում էս: Գերմանական զգեստները յանձնեցինք, պատ-  
հելով չենք:

27ի առաւօտեան Աուշուիցի կայարանից մեկնեցինք: Վերանսանցինք  
Կրակովու: Աղջամուղը էր, երբ իջանք Ռազոմու: Վրացական խուճրը շա-  
րու նակեց ու զիտրու թիւնք: Մնացածներս սպասեցինք կայարանամերձ թէ-  
յարանում: Ապա, մէկ կայարան անց, իջաւ նաև աղբիւնացիներ խուճրը:  
Մնացինք 18 հայեր: Գերլինու մ նորից վերանսանով՝ կէս գիշերին հասանք  
Պուլաի կայարան: Ուշով քայլեցինք մօտ երեք կիլոմետր, հասանք մերձակայ  
նաճարս եւ գիշերեցինք ահուճքում:

(Շար. 2)

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ



# Ի Վայական Շարժում

ՀԵՌԱԿԱՅ

ԶՐՈՅՑ

ՀԱՅՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՊԶՏԻԿԵԱՆԻ

ՀԵՏ



*Սփիւռֆահայ արուեստի շրջանակներում մէջ. Հայր Յարութիւն Պարիկեանի անունն ու գործը ծանօթ են սակաւաբիւ գեղարուեստասէրներու. հակառակ անոր, որ իր ինքնուրոյն գեղանկարներով ան Յուանած է արուեստի ամէնէն խստապահանջ ամպիոններն ու իննդատները:*

*Աւելի քան երկու տասնամիակէ ի վեր մանկավարժութեան, գրականութեան եւ նկարչութեան նուիրուած այս հոգեւորականն ու դաստիարակը, որ չի սիրիր «գեղանկարի» կոչուիչ եւ գերազանցօրէն կը նախընտրէ «վարդապետ» կամ «Հայր» կոչոււմը, ամբողջական պատասխանատուութեամբ եւ խորագոյն գիտակցութեամբ կը բարձրանայ գոյներու եւ ձեւերու վեհացնող խորանն ի վեր՝ դրսեւորելու եւ ամառ իր ինքնութեան ամէնէն թելուորը, խորհրդալի եւ յուսանահան պարու մները:*

digitised by A.R.A.R.@

Այդ իսկ պատճառով, 1966ին և 1970ին Փարիզ Բազմազգի մտայնորդ պարզեւտրուած, 1971ին՝ Ֆրանսայի Գեղարուեստից Ակադեմիայէն «Ասպետի խաչ» շքանշանին տիրացած, իսկ 1978ին՝ Փրանսական կառավարութեան կողմէ «Պատուոյ լեգէննի Ասպետ» հռչակուած Հ. Յարութիւն Պատիկեան, հակառակ Փիլատոյի քայտերանքին և Կաթողիկոսական արուեստարաններու գնահատական արտայայտութիւններուն՝ յտարուեցաւ ինքզինք մսխելու կամ շարունակ մտն միտքերը կրկնելու վտանգաւոր խաղէն, որ մեծապէս հարուածեց սպառնալից շուկայի պահանջներուն հետ Բայլ պահող մոյնիսկ տաղանդաւոր շատ մը անուններ, այլ, բնդհակառակն, մնաց ու կը շարունակէ մնայ գոյներու, ձեւերու և գիծերու խոյանքին այրութեանով հայուն զարաւոր էութեան բնագանցական պարտմներն ու լինելութեան պայտար մատուցանող պատարագիչ մը:

Հետագայ էջերով կու տամք այս արուեստագէտ վարդապետին հետ մեր ունեցած հեռակայ գրայցը, որ խօսուած է ինքնին:



● Իր բաճանջիւր մաճուկի հետ յայտնուող նկարչական եւտարբերութիւնները ուժանց մօտ կը խամրի պատանի հասակին, իսկ ուրիշներ կը պահեն իրենց եւտարբերութիւնն ու սէրը՝ առանց տարուելու արեւետավարժ նկարիչ դառնալու հրապոյրներէն: Ումանք մոյնիսկ երազարակաւ հանդէս գայէ ետք, կը տիրեն մնայ տիրող գծողներ: Կը հանէի՞ք խօսիլ ձեր փորձառութեան մասին:

— Իւրաքանչիւր անձ օտուած է յատկութեամբ՝ բնատուր կերպով: Հետագային, միջավայրի, ուսումի և երբեմն այլ պարագաներու անակնկալ պայմանները կը բնորոշեն անձի մը առնչիւր ու զգութիւնը: Նայել, կրնամ ըսել, եղաւ իմ պարագաս: Իւրաքանչիւր և սկստութեան տարիներուն գծելու և ստեղծագործելու յատուկ ձգտումս կրցաւ յարմար Հող գտնել և զարգանայ Վենետիկի և յատկապէս Ս. Ղազարի աղօթքի և մշակութի տաճարին մէջ, ուր նարեկացի մը կողքին բնկերութիւն կ'ընէին Սարգիս Պիծակ, Թորոս Տարօնեցի և Այվազովսկին:

● Այլարչական ձեր դաստիարակութիւնը, ձեր դիմագիծի կազմաւորումն ու բիրեղացումը կը պարտիք արեւմրեան հասկացողութիւններու, որոնք բնականօրէն զարգացումն են Արեւմուտի նկարչութեան զարաւոր

հալովայթներու և աւանդներու: Եւրոպացիին համար հարազատ եղող այս ոճը կամ մոյնիսկ դպրոցները որքանօ՞վ կրնան խորք չենել հայ գեղանկարիչի մը, այս պարագային Ռոսսիաներու, Պիծակներու, Թաղեոսեաններու և Սարեաններու ժառանգորդ Հայր Յ. Պատիկեանին:

— Իմ պարագայիս, իբրև միանձն Միխայիլեան, ամենեւին չի յարմարի ձեր վարկածը: Ս. Ղազարը, որ եղաւ զարբերուող միտքիս և Հողիս, փոքրիկ և ամբողջական Հայաստան մըն է, Արեւմուտքի սրտին վրայ: Արեւմուտքը Հոն ներկայ է միայն ներութեամբ և ջնարակով: Ոգին, էութիւնը կ'ապրի Բագրատունիի շէնքի ինքնագնացով, Այլանի Վարայրի պլաուլոյտով, Միխայիլի շէնքի զանազան քառարանով: Նկարչութեան մէջ մանաւանդ, նիւթը չէ, որ կը շնորհակալուի անոր բովանդակութիւնը, այլ՝ ոգին: Եթէ Ռուսիան Արարատները գծէր, Հայ նկարիչ պիտի չգտնար երբեք նմանապէս իմ գոյներս, գիծերս, շարժումներս ու երկնագներս ծնունդ առած են մօրս Մուսալեան պատմուածքներէն, Ս. Ղազարի Հազարաւոր ձեռագիրներու հետ ունեցած շփումէս, Փարպեցիի Արարատի նկարագրութեանէն, Հայաստանեղ պաշարէն, այսօրան տուեալ՝ անխուսափելիօրէն կը զարմնեն զիս շնորհակալի և վստահարար այս է նաև զազանքը յաջողութեան

և Հմայքին, որոնց կ'արժանանամ Արեւմտուրի քննադատներու աչքին, իմ գիտարուեստով աշխատող բազմաթիւ նկարիչներու մէջ:

● Հայկական մանրանկարչութեան, որմանակարչութեան եւ գեղանկարչութեան աւանդներն եւ էութենէն այս հեռացու մը իմացական-մտաւորական պահածն ունի, քէ կը բխի աւելի խոր կեցումով մը: Իրքեւ հայ նկարիչ, որ հայ կերպարարութեան աւանդները զարգացնելու մուտքով պարտականու լուրջ ունի, ինչպէ՞ս կը մեկնաբանէ 180 աստիճան այս հեռացումը հայ գեղանկարչութեան ակունքներէն:

— Կարծեմ այս հարցումին պատասխանը անուղղակիօրէն տուի արդէն: Կ'ուզէի ճշգիւ, որ 180 աստիճանի հեռացումը երեւութեան է միայն: Երբ ասնէնք Մլքէ թագուհի Աւետարանին (1862 թ.) եւ Աւրո Ռազարատեւի Աստուածաշուքը (ժ՛՛ղ դար) (երկուքն ալ Ս. Ղազարի մատենադարանի գանձեր) իրարմէ 1000 տարիներ բաժնող հայ մանրանկարչութեան զարգացման, պիտի նկատենք որ ինչո՞նք թիւն եւ գիտարուեստի 180 աստիճան հեռացում — ինչպէս կ'ընէք —:

Ներկայիս, գիտարուեստի յատկապէս զարգումը ոչ թէ գարեբու, այլ տասնամեակներու բնթացքին կը կատարուի: Նոյնիսկ Ռուսիոյ եւ Պիժնի, մնացով հանդերձ Ռուսիոյ եւ Պիժնի, այսօր պիտի ըլլային դարուս գաւազն՝ 20րդ դարու գիտարուեստով, բայց ոսպինեան եւ պիժնիան ոգիով: Արդէն՝ ճարտարապետութեան մէջ մեր հիմնական տեղաւայր անկէ կը ծնի, որ եւթներորդ դարու մեր նմոյշները եղածին պէս կը վերարտադրենք Նիւ Եորքի, Հայէպի կամ Փարիզի երկինքներու տակ, ասանց 20րդ դարու գիտարուեստի եւ 20րդ դարու հայու սպարուսները ներմուծելու անոնց մէջ:

● Կարգ մը արուեստագէտներ եւ արուեստաբաններ կը պաշտպանեն այն տեսակետը, թէ որեւէ արուեստի գործի տոանցը մարդն է: Մարդուն ներաշխարհը յուզելով հանդերձ, միտքի եւ վերացական ոլորտներու մեկ-

նող պատատոները առհասարակ բաւական կը հեռանան մարդուն մարդկային կացութենէն՝ տիեզերական խորհորդներու աշխարհին եւ փիլիսոփայական ոլորտներու մէջ թափանցելու միտումով: Զէ՛ք կարծեք, որ ասիկա մոյճիմքն մարդէն փախուստի մի մըն է:

— Բոլոր արուեստագէտներուն համար արուեստին առանցքը մարդն է, սակայն գոյութիւն չունի եւ չի կրնար ունենալ երեւակայական «մարդ» մը, որ միջադային ըլլայ, ամէնուն յարմարող կայ հայ մարդը, Քրանսացի մարդը, ռուս մարդը, եւ ո՛րքան արուեստագէտ մը յաջողի պահել իր հարազատ ինքնութիւնը, այնքան արուեստագէտ կը մնայ եւ բովանդակայից: Ինքնութիւն չունեցող արուեստագէտը դատապարտուած է, ի յառաջագունէ, անհետ կորուսելու:

● Կը բուի, թէ կը կիրարկէ թեքնիքի վրայ հիմնուած նկարչութիւն մը, ուր դիպումն ու պատահարը մոյճեան գերակատար են, ո՛րքան պրպտոգ-կանոնող ձեռքը: Անշուշտ, անակնկալին ծնունդը հանդիսացող ձեռքը նաեւ դուք կ'ենթարկէք մեր կամքին: Այս պարագան, սակայն, ըլլալով ստեղծագործութեան ձեւաւորման մէջ իր յուսքը ունեցող եւ միջամտող տարր, ներդրում չի՞ պատճառեր ձեռքը: Եթէ այս՝ ինչպէ՞ս կը շրջանցէ դիպումին եւ անակնկալին ձեւաւորումները:

— Իսկական արուեստին մէջ պատահար գոյութիւն չունի, որեւէ թեքնիք միջոց է միայն արտայայտութեան, անոնք մտածուկ մը, որ գոյներով եւ պիժներով կը «մտածուի» սպիտակ թուղթը: Այն՝ ինչ «մտածուի» կը նկատենք մեր շարահասարակ տղերքով, մտածու կին համար պարտեզներ, տուններ, ծաղիկներ ու երկինքներ կը ներկայացնեն: Պատահար գիտողին մէջ կրնայ միայն գոյութիւն ու նեղաւ, ոչ բաւաւ որ ստեղծագործողին: Անքան էական երբ արուեստի նմանող գործեր չեն կրնար տալ, կ'ի՞նչ ոչ պատահամը:

● Կը մշակէ նկարչութիւն մը, որ ինքնին հերքումն է դարերու բնթագքին մուտքակալուցած ակադեմական նը-

կարչութեան: Գեղանկարչութեան աւանդական օրէնքներու եւ ընկալնայ հասկացողութիւններու ղէմ մոյնիսկ ամէնէն ծայրայեղ բնութագումները ընդունելով եւ յարգելով եանդերձ, կ'ուզէինք իմանալ, թէ ի՞նչ միաստակ կը հետապնդէ մտքարարութիւնը ձեզի համար, ի՞նչ է ձեր վերջնական Ուստակալէտը:

— *Թէև պատահածն է հմ այս հարցումին, բայց կ'ուզէի նշում մը եւս կատարել: Չկայ պատմական նկարչութիւն, կան պատմութիւնը կերտող նկարչներ, եւ պատմութիւն կը կերտեն միայն անոնք, որ կ'ապրին իրենց ժողովուրդին ինքնութիւնը՝ ամբողջութեամբ: Իուրիք խորաբանողակներէն մինչև Սարգսրապարտի յուշարձանները անցած են 15 դար եւ աւելի: Սեւանի խաչքարի անանուն արուեստագէտին եւ Արթուր Չարմազ-ճանի մը կամ Այծեմնիկ Ուրարտուի ստեղծագործութիւններուն մէջ զբնկալնայ Հասկացողութեան» եզրն իսկ գոյութիւն չունի, բայց գոյութիւն ունի «Ինքնութիւն» մը, «Հայկական» ինքնութիւնը՝ զիրար զարեք բաժնող Հայ արուեստագէտներու: անա այս է, որ կը նուիրողորմէ պատմական նկարչութիւնը ինքնութիւն ունեցող ազգի մը:*

Եւ վերջնական նպատակակէտ չեմ հետապնդեր: կ'ապրիմ ներկան. Հայ անհատի իմ ներկաս: Առօրեայի, Սփիւռքի, Հայրենիքի, անհատական ուրախութիւններովս եւ ցաւերովս:

● Այն տպաւորութիւնը ունինք, թէ որեւէ մտքարարութիւն, որ կը երևնուի միայն ընդունուածն ու ծանօթը փոխելու տեսլականին վրայ, կամայ-տկամայ կը դատապարտուի ինքնամայասակ շարժում մը ըլլալու ճակատագիրին: Համաձայն է: Եթէ ոչ՝ ինչպէ՞ս կարելի է ամբողջովին կտրուիլ մշակութային արժանանքէն:

— *Եթէ նորարարութիւնը միայն ձեւական է եւ պահուած է կերպը, ոչինչ, արուեստագէտը իր մշակութիւն արժանանքէն չի կրնար կտրուիլ:*

● Նորարարութիւնը, այս պարագային՝ վերացական ու միտսիք ձեր այս

Ոկարչութիւնը ի՞նչ մշակակէտ կը հետապնդէ: Կրճա՞յ անցնի իր թիֆուհի-ձեւ խաղէն ամբողջ...

— *Անցած է արդէն. քանի չի կրնար «Բարտեք» ըլլալ, կ'իմ Հայ ՂԸՄԻՅԻ ցեղանին յատկանիշ մըն է ձեզ բնորոշող — մասնաւոր մը գրականութիւնը ոչ ոք — ան է «Բարտեքիզմ» — Իստանբուլ Նարեկացիին, որ իմ «Կուրք» է. ինծի համար Նարեկացիին ժարգիւթն է մեծազոյն «Գեորգիարտ» հանճարն է. անոր ամէն մէկ բառը սուրբէն պատկեր մըն է, իրականութեան սպրտմի ակունքէն բխած:*

● Իստեղծ ձեր գործերը կ'ունենանք այն տպաւորութիւնը, թէ կը գծէ ցիւրեմն աւերողական յարուսով: Կը հատատանք, որ մեզ պատասխանելու նիստագրումը համազօր է ծէտի մը: Հոն, գոյներու եւ ձեւերու տիեզերքին մէջ, արուեստագէտն ու պատարագիչը կը մոյնաման իրենց վերացումին մէջ: Բայց արուեստը ման կ'ներարկէ արքայանայ, հոգեվիճակի խտացում եւ զգացումներու, յոյզերու եւ խոսքերու անխոցելի կառուցում՝ յար եւ մեզնէ քար առ քար բարձրացող օրելէ զլուս-գործող տաճարի: Ինչ ինչպէ՞ս կը հաշտեցնէք երազն ու արթնութիւնը՝ սպիտակ թուղթին վրայ:

— *Կը գծեմ ամենայն խաղաղութեամբ, կրօնական Հանգարտութեամբ, ատենց չիզկերու մասնաւոր սրկու մի: Սպիտակ տարածութեան վրայ կը գրոյմեմ հոգեկան, մտային եւ զգացական (գոյներու եւ ձեւերու) անմիջական սպրտմիներ: Երազատեմ մը չեմ, ոչ խառնուածքով, ոչ այ մշակոյթով. երազայինը գործերուս մէջ՝ երեւոյթ է միայն:*

● Իր գանձերը, ածխամատիտը, չիմական միւսն ու Ռկարչուկան այս գործիքները, որոնք դարեւ շարունակ արտայայտած են գեղանկարչներու յոյզերն ու սպրտմիները, որքանով հարազատ են ձեզի:

— *Ուրարտուի անտարբեր եմ «Հասկան» նկատուած նկարչական միջոցներու հանդէպ. երկար ատեն ձեռնած եմ բոլոր տեսակներն այ, բայց տարբերներ է*

վեր կը սիրեմ ստեղծագործել իմ «Ննա-  
րած» նիւթերով. օրէ օր յայանուող գի-  
տական եւ քիմիական աարբերք եւ բա-  
զողրութիւնները ու շաղրութիւնս կը  
գրաւեն: Ներկայիս, կ'աշխատեմ գու-  
նաւոր ապակիներու մանրացուցական  
փոշիներու քիմիական խառնուրդներով  
գոյներ յառաջ բերել: Հաւատացե՛ք, որ  
շատ գրաւիլ գրազանք մըն է:

● Երէ պահ մը ընդունինք, որ հայ-  
կական մշակոյթը — իմշպէս որեւէ  
մշակոյթ — կը հանդիսանայ հաւաքա-  
կան յիշողութիւնը հայ ժողովուրդին,  
կրնա՞ք ապրիլ առանց այդ յիշողու-  
թեան: Ի՞նչ տարողութեամբ վիճարա-  
նութիւններ իրարու դէմ կը հանէ ձեզ եւ  
ձեր ժառանգը հանդիսացող այս գա-  
րաւոր յիշողութիւնը:

— Պատկերներն ալ ընթացքին լիւր լի  
պատասխանած եմ ասոր:

● Ի դէպ, ի՞նչ է ձեր կեցուածքը ճա-  
ղապարհական յիշողութեան, այս պա-  
րագային՝ հայկական ճաղապարհաբու-  
թեան կապանքներուն եւ անոր ստեղ-  
ծագործ ու մղիչ ուժ հանդիսացող յա-  
րերուն նկատմամբ:

— Եթէ նկատի առնէք, որ մեր բազմա-  
Հազարամեայ պատմութեան ընթացքին  
միայն 700-800 տարի քաղաքական ան-  
կախութիւն ու նեցած ենք, մինչ ազգեր,  
որ միայն աշխարհակալած են (իրենց  
պատմութեան ընթացքին) եւ այսօր  
գոյութիւն ունին միայն պատմական

գիրքերու մէջ, կրնաք ըմբռնել իմ կեց-  
ւածքը Հայկական քաղաքակրթութեան  
եւ անոր ստեղծագործ ուժին հանդէպ:  
Չարմանալի ժողովուրդ մըն ենք, ան-  
կրկնելի իր տեսակին մէջ: Հոռմէացիները  
տիեզերական զարձած են Յուլիոս Կեսա-  
րով, Օգոստոս Կայսրով, Արայանսով...:  
Վերգիլիոսն ու Ովիպիոսը իրենց որեւէ  
նպատակ մը չեն բերած. մենք Տիգրանն ու  
Մուշեղը այնքան չենք յիշեր, որքան  
Եպարտուածն զօրավար մը՝ Վարդան,  
կամ մտքի եւ գրիչի մարդիկ՝ Մեսրոպ,  
Նարեկացի, Զարեհ, անբաժանելիօրէն  
երկու Հոգի կապուած ազգ մըն ենք. հայ-  
րենի Հոգ եւ հայրենի մշակոյթ, այդ զոյգ  
ապրու մտերն են մեր յաւերժութեան բա-  
նալին. եթէ Սփիւռքի մէջ Հայ մշակոյթը  
մեռնի, Սփիւռքը մեռած նկատենք: Հայ  
մշակոյթ կը նշանակէ Հաւատք, Գիր, Ար-  
եւստ՝ գարեբու խորքէն ծնած:


● Կը կարծե՞ք, որ հայ գեղանկարչու-  
թիւնը յազոզ հարցերուն մէջ ձեր  
փնտռումները կ'արտայայտեն ազ-  
գային իրայատուկ կեցումով մը՝ ի  
խնդիր հայկական գեղանկարչութեան  
աւանդներու բիրեզացման եւ հարս-  
տացման:

— Այդ յաւանութիւնը չունիմ. միակ  
գիտցածս այն է, որ ես կը ստեղծագործեմ  
— բայց եւ հայ եմ —, իմ ձեռնպարծս իր-  
չի. հայ կը բիրեզանայ իմ ձեռքերուս  
մէջ եւ այս ըմբռնումով ամէն հայ մարդ,  
որ կը ծառայէ մշակոյթին, օրէ օր կրնայ  
բիրեզացնել հայ մշակոյթի աւանդները:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Մ. ԻՇԽԱՆ

# ԱԶԳԱՅԻՆ — ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ Ե Ր Գ Ե Ր



Վերջին մէկ դարու Հայ կեանքը ճանչցու ազգային գարթօնքի, ինքնագիտակցութեան, հալածանքի, ջարդերու, յեղափոխական պայքարի եւ Հերոսական մարտնչու մենքու խռովայոյց շրջան մը, որ լի է բոցավառ ապրու մենքով: Քանի մը առանձնակ տարիներու ընթացքին Հայ մարդը ապրեցաւ այնպիսի՝ յուզումներ, որոնցմէ զուրկ էր մնացած ստրկութեան հինգ դարերուն: Ողբերգական եւ գիւցազնալուծ զէպքերով հարուստ այս շրջանը արտայայտութիւն գտաւ մեր նոր դրականութեան մէջ՝ Հ.Ղ. Ալիշանէն մինչեւ Դ. Վարուժան ու Յ. Թումանեան երկարոց բանաստեղծներու գրչով:

Գեղարուեստական գրականութեան զուգրնթաց ստեղծուեցան ազգային-յեղափոխական բազմաթիւ երգեր, որոնք մեր ժողովուրդի ապրու մենքուն անմիջական արձագանգը կը կազմեն: Մեր ազգային երգարանը լեցնող հարիւրէ աւելի այդ երգերը ազատագրական պայքարի գրուածներէն կը բխին, Հերոսներու գործէն կը ներշնչուին եւ ժողովուրդի վշտին ու ա՛յլեւայու թեանց մըմուսջները կը հանդիսանան:

Այդ երգերուն կարեւոր մէկ մասը տակաւին կ'երգուի ակուսմաներու մէջ եւ հաւարոյթներու ընթացքին: Մինչեւ վերջերս անոնք կը կազմէին ժողովրդական խաւերու միակ երգապաշարը եւ կը հնչէին ո՛չ միայն իրրեւ հայրենասիրական տրամադրութիւններու արտայայտութիւն, այլեւ՝ ուրախութեան սեղաններու շուրջ, սուգի եւ վշտի պահերուն, գպրոցական կամ այլ հանգէններու ընթացքին: Մինչեւ անգամ հարսը տուն տանելու հանդիսաւոր առիթներով հարսնեւորներու շրթունքէն սովորական երեւոյթ էր ազգային-յեղափոխական երգեր լսել:

Փամանակէ մը ի վեր «էստրատային» կոչուած խայտարղէտ երգերու նորոյթը որոշ չափով եկաւ գրաւելու մեր ազգային պարզուկ երգերուն տեղը. այսու հանդերձ անոնք չեն մոռցուած բոլորովին եւ կը շարունակեն յուզել մեր ժողովուրդի սրտին լարերը:

Հայ երգարանը աճած եւ ուռած է Հիմա: Ա՛յն աստիճան բազմացած են «Հայ երգ» անունին տակ մեզի հրամցուածները, որ կը հրատարակուին բազմաթիւ հաստիներով: Թէ ո՞ր աստիճան հարազատ են անոնք Հայ լեզուին եւ Հայ երաժշտութեան ոճին, այլ խնդիր: Փամանակը մատահարար պիտի մագէտանոնք:



Որք կը խօսիմ ճշայ երգչի մասին, ես հոս նկատի ունիմ միայն մեր մանկու թեան եւ պատանեկութեան համեստ երգարանը, որ յաճախ ձեռագիր կ'ըլլար շատ մը Հայ ընտանիքներու սեղանին վրայ: Այդ երգարանը կայ տակաւին, կը մնայ թարմ ու այժմէական, կազմելով կորիզը նոր հրատարակուող նկարագարդ եւ փառաս որ բոլոր երգարաններուն:

Մեր ազգային-յեղափոխական երգերը չեն նետուած հնու թեանց թանգարանը: Անոնք կ'ապրին մեր սրտերուն մէջ եւ շրթներուն վրայ, որովհետեւ նորից կ'երգերը չեն կրնար գրաւել անոնց տեղը: Անոնց արտայայտած յոյզերը, ցաւերը, երպն ու ոգի որութիւն մեր այսօրու ան կեանքին մաս կը կազմեն: Մեր ժողովուրդը կը նմանի ճամբայ ինկած այն կարաւանին, որ դեռ կը քալէ եւ այդ երգերը կ'երգէ քիչ մը ինքզինք զօտեպնդելու, քիչ մը անցեալը յիշելու եւ, մա՛նաւանդ՝ իր հետապնդած նպատակին կարօտը արտայայտելու համար: Ահա թէ ինչու արդիական ծափն ու պարը, թմբուկն ու կիթառը չկրցան ժողցնել տայ զանոնք:

Մեր ազգային-յեղափոխական երգերը պիտի հնչեն այնքան ատեն, որ անոնց բառերուն եւ մեղեդիին մէջ ծածանող երազը իրականութիւն չէ գործած:



Ի՞նչ կ'արժեն այս երգերը՝ իրենց բովանդակութեամբ եւ արուեստով: Խօսքերուն արուեստով անշուշտ, որովհետեւ անոնց եղանակներուն քննութիւնը եւ պարզարտածութիւնը կը պատկանին երաժշտական կայուածին:

Մինչեւ հիմա, որքան գիտենք, լուրջ աշխատանք մը չէ կատարուած այս ուղղութեամբ: Հետաքրքրական պիտի ըլլայ ընդհանուր ակնարկի մը մէջ համազրեց զանոնք եւ բնութագրել յիթի եւ ձեւի կրկնակ տեսակէտէն:

Որքը Հայելին է ժողովուրդի մը հոգիին: Ազգային-յեղափոխական մեր երգերը Հայելին են նաեւ բախտորոշ ժամանակաշրջանի մը պատմական զէպքերուն եւ գերակատարներուն:

Անոնց մէկ մասը ստորագրուած է Հայ յեղափոխութիւնը պատրաստող յայտնի գէժքերու կողմէ, Ռուսինեան, Պելիկթալեան, Ալիշան, Նալբանդեան, Պատկանեան, Բաֆֆի, Ահարոնեան, Իսահակեան, եւ այլն:

Իսկ երգերուն խոշոր մէկ տոկոսն այ յօրինուած է գուսաններու, աշուղներու կամ անծանօթ տաղասացներու կողմէ.— «Ձայն մը հնչեց», «Արագի ափին», «Մեմք անկեղծ զիմուար հեմք», «Իրքիւ արծիւ», «Կարկուտ տեղաց», «Դաշնակցական խումբ», «Լուսին չկար», «Հերոս մոնչեց», «Պանք Օթուման», «Վերքերով լի», «Նպատակիս հասնիմ միայն», եւ այլն:

Գնդրուկ աշուղներ, երբեմն Հագի կիտապրագէտ, ոգի որու ան յեղափոխականներու հերոսական խոյանքներով, հիւսած են գովքը այս կամ այն հերոսին եւ կամ քանի մը անպահոյճ տողերով անմահացուցած յիւստակերի դէպք մը եւ թուական մը: Կան մինչեւ անգամ Հայդու կիներ, որոնք Հանգիստի մէկ պահուն ժայռի մը յենած, յօրինած են պարզուկ երգեր՝ իրենց սրտին ձայնը յսելի զարմնելու կամ բնդհանրական ապրումներուն արձագանդելու համար:

Մտաւորական բանաստեղծներուն օտեղնագործութիւնը ըլլայ թէ կոյր սուու դի մը յօրինու մը, անունք, երկուքն այ, սպիտակ ու գուղափարներով օտար

չեն իրարու . ընդ հակառակն, իրար կը լրացնեն եւ ազատութեան նոյն նպատակը կը շփոթեն:

Բնականաբար մեր նաեօթ բանաստեղծներու ն շերթու անները, որոնք Հետադային երգ են գարձած, աւելի զհզեցիկ ձեւ ակերպում մով կ'արտայայտեն ժողովուրդի ապրումները: Այսու հանդերձ, մի ա անանու ն երգերը իրենց սրտատուչ պարզութեան մէջ, իրենց միամիտ շեշտով, յաճախ նոյնքան յուզիչ են ու հոգեզրու, որքան աստիճանները:

Նախայեղափոխական երգերու գրեթէ ամբողջ փունջը կը պատկանի մեր ազգային եւ գրական Զարթօնքը կերտող սերունդին: Ռոմանթիկ հայրենասիրութեամբ տարուած՝ այդ սերունդի շերթողները իրենց ակնարկը դարձուցած են զէպի մեր պատմութեան անցեալը եւ անկէ դուրս կը բերեն Վարդանի պէս յուսատէր զէմբեր: Հայաստան, անոր անցեալը, անոր փառքերն աւտառապանքները կը լեցնեն, որինակ, Ալիշանի երգերը: Վշտահար Նահապետար կը խօսեցնէ Աւարայրի բլրուլը, կը խօսեցնէ Մասիսները, արցունքով կը հակի Հայաստանի ներկայ աւերակներուն վրայ, ի վերջոյ բացազանչեայնու Համար:

Քանց օտար վարդ քաղցր է հայրենեաց փուշ...

Երբեմն իր մէջ կ'արթննան ռազմական արամազբութիւններ ալ, միշտ անցեալ օրերու ներշնչումով եւ իր ընթացքով որոտանումով մեզի կը բերէ Աւարայրի դաշտին դիւ ցազնական արձագանդները:

Իր յաջորդն ու ժառանգորդը՝ Մկրտիչ Պէշիկթաշեան, մեր երգարանը հարստացուցած է այնպիսի՝ երգերով, որոնք Ալիշանի պատմական հայրենասիրութեան լարերը հնչեցնելով հանդերձ, ժամանակակից Հայ մարդուն մէջ մեր քաջ նախնիքներու ոգիին յայտնութիւնը կը պանծացնեն: Զլլթու նցի քաջորդին, իր կոնիւով, յաղթանակով կամ մահով, նոր օրերու Հայի կամ Վարդան կը գտնուայ:

Թէպէտ քոչնիկն ու հովն հայոց  
Աւերակաց շրջին վրայ,  
Թէեւ պղտոր վտակն հայոց  
Նոցիններու մէջ կը սողայ,  
Նո՛ւա հառաչէ են հայրենեաց,  
Նո՛ւա չերթան սրտէս ի քաց:

Այս երգին մէջ ներկայ է դեռ Ալիշան: Ներկայ են Հայ բազմութիւններուն ն յուս մղկտացող սրտերը, որոնք կը նախընտրեն հայրենեաց փուշը օտարի վարդին: Սակայն Պէշիկթաշեան վշտահար Հայ մօր բուխիք ու բիշ բաներ ու նի:

Քրքաց մայրեր թող լան ու դուն  
Ռւրախ յուրեր տար ի Զէշթուն:

Յեղափոխութեան ճամբուն վրայ նետուած խիզախ քոյլ մըն է արդէն այս մէկը եւ գալիք մարտնչու մներու ն քացորոշ հրաւերը:

Հայաստանի արեւելեան ճակատէն կը հնչեն Միքայէլ Նալբանդեանի եւ Փամատ Քաթիպայի տիրական ձայները: Երկու քն ալ հարստացուցած են մեր ազգային երգարանը՝ իրենց ազատասեր եւ ռազմաչու նչ տաղերով: Նայրանդեանի ըԱզատութեան երգը՝ դարձաւ ազօթքի պէս խորհրդաւոր սրբութիւն Հայ շրթներու վրայ: Իսկ երբ այդ շրթու նքները լէին կրնար բարձրաձայն երգել քայն, իշխանութեանց դրած արգելիքին պատճառով, անիկա կը հնչէր վստահարար սրտերու խորք:

Ազատն Աստուած այն օրից,  
Երբ հաճեցաւ շունչ փչիլ...

Այս քառերու կախարդանքով Հայ Հոգին կ'արթննար իր դարաւոր թմբերէն ու կը պարզէր թեւերը ապաւ երկինքի ոյրտաներու ն անհուն կարօտումով:

Գամառ Քաթիպա տիրական տեղ մը կը գրաւէ Հայ երգարանին մէջ:  
Ահա իր նշանաւ որ «Արաբսի արտասուէր», որ ամբողջ Հայութեան եւ Հա-  
յաստանի արտասուէրն է:

Մայր Արաբսի փիերով  
Քայլամուրթ զնում եմ...

Մէկ դարէ ի վեր Հայ ժողովուրդը կ'երգէ այս երգը նոյն ջերմութեամբ  
ու թախծով, անոր իրաքանչիւր տողին մէջ գտնելով իր սեփական վիշտը,  
բողոքը եւ ուխտը:

Քանի որ իմ զաւակուծք  
Այսպէս կը մնամ պամդախտ՝  
Ինձ միշտ սգուր կը տեսնէք,  
Այս է անխար իմ սուրբ ախտ...

Ահա իր «Թող փչէ քամիմ», որ անչէջ յոյս եւ հաւատք կը ներշնչէ Հայու  
զաւակներուն:

Թող զայ փորձուքիւն, թող զայ հալածանք,  
Խաւար թող դառնայ անագօտ յոյսը,  
Սարսափելի չեմ հայիմ տառապանք,  
Միայն... չհատնէր խղճուկի յոյսը:

Ու տակաւին Վարդանի երգը, բժրատուացումի գոռ բաւերով մարտի  
հրաւիրող իր «Հիմի» էլ լսեցձը, թուն տալէ աւելի գերազոյն արթնութեան  
կանչող իր «օրօրաները եւ այնքա՛ն ուրիշներ:

Նախաշէղափոխական այս երգերը մեծ դեր խաղացած են, իրրեւ զգա-  
տութեան կոչեր, արթնացման գանգակներ եւ հայրենիքի ու ազատութեան  
սէրը արծարծող ողբերգութեան:

Ո՛չ մէկ ուրիշ ազգակ այնքան մեծ ուժ ու նի հողիներու վրայ, որքան  
երգը, երբ ան կենդանի բառ է եւ Հնչիւն եւ մանուկ օրերէն մարդկային սիրտը  
կ'առնէ իր հմայքի ցանցին մէջ:

Ջինեայ յեղափոխութիւնը կանխող շրջանի երգերը տխուր են, մտայն եւ  
լաւիկան՝ Հայկական զաւանդներու մէջ տառապող անօգնական Հայ կեանքե-  
րուն պէտ: Երգ ըլլալէ աւելի՝ անունք արիւնող սրտերէ գուրս հոտող կակիծ ու  
Հեծեծանք են միայն: Զօրաւ որ բողոքի շնչան իսկ կը պակսի անունք իր ճակա-  
տագրին լքուած եւ ստրկութեան շղթաներ կրող ժողովուրդի մը ողբը միայն  
լսելի կը գտնուայ անոնցմէ մեծ մասին մէջ: Այդ երգերը լսելով՝ զժուար չէ  
պատկերացնել այն ահա որ ողբերգութիւնը, զոր ապրեցան մեր հայրերը,  
ամէն վայրկեան ենթակայ ջիւրտի եւ թուրքի հալածանքին, կեղեքու մտերուն,  
ջարդին ու սարսափին:

Մանօթ է պատմութիւնը:

Մեր երգերէն ոմանք արիւնտ այդ պատմութեան թեւաւ որ արձագան-  
դը կը պտըտցնեն զեւ միեւնոյն այսօր, ամէն Հայու հողին վերեւ, նոյնիսկ Հե-  
ռաւ որ այս երկիրներուէն ասկ:

Ահա որ բառ մը կայ մեր գրականութեան եւ երգերուն մէջ՝ — ՋՈՒ-  
ՂՈՒՄ: Հայ լեզուին չի պատկանիր այդ բառը, ասկայն ոչ որ գայն ապրած է  
այնքա՛ն խոր աստիճանքով եւ այնքա՛ն բիրտ իրականութեամբ, որքան Հայր:  
Մեր գահինները, մեզի տուած ցաւին ու տառապանքին հետ, մեր լեզուին փո-  
խանցած են նաև անոր անհուն տարողութիւնը արտայայտելու յարմար բա-  
ռը՝ — ՋՈՒՂՈՒՄ: Եթէ Ա. Էսթիս Ահարոնեան մեր նոր գրականութեան մէջ կը  
համարուի այդ «գուլու մարն մեծագոյն երգիչը, ինք մինակը չէ սակայն, որ  
կը յափէ Հայ տառապանքին անդու նզրո՛ւ: Հայ երգարանին մէջ չեն պակսիր  
զուլու մէն զարնուած սրտերու արիւնն ու արցունքը:

Պարզի՛ր, ազրի՛ր, քրդի սոզն ջուր տանեմ,  
 Պարզի՛ր, պարզի՛ր, բեկի սոզն ջուր տանեմ...  
 Ազրի՛ր գիտե՞ս, քիւրտր մեզի ի՞նչ կ'անէ.  
 Կր կողուպտէ, կր հայածէ, կր սպաննէ...  
 Այ՛նք քացի՛ սուգ ու շիւան հս տեսայ-  
 կար ժամանակ մեմք էլ ազատ կ'ապրէինք.  
 Մեր սեփական թագաւորներն ունէինք.  
 Գահ ու փառհից, ազատ կեանքից գրկուեցինք,  
 Արիւնքբուր թշնամու ձեռք մատնուեցինք...  
 Աղբի՛ր, հիմա սեմ է պատեր մեր աշխարհ,  
 Զուլո՛ւմ, զուլո՛ւմ, քարդ ու սարսափ ու խաւար...  
 Այս ու նման աւարու հաս, պարզու կ տողերու մէջ հայ ազգի կամ հայ

*պատմարդը, մէկ խոտրով՝ հայ գիւղացին խոտրու ցած է ամբողջ ժողովուրդի մը ապրան ծով գիշար, — արիւնքբուր թշնամի, քարդ ու սարսափ, սրբացած ժանու կենք, այրիացած հարսներ, որդեկորոյ ժայրեր, սմայացած շէներ...: Ձեր այրին առին: բերէք զպաշտարարոյ գինեակ աւ աղակներ, որոնք որեւէ առան կրնան առնարանի արշաւէ խաղաղ աշխատանքի լծուած հայ գիւղացին վրայ, խլել անոր սխառակը, քանդել արա ու այգի, փայցնել գեղեցիկ աղջիկներ եւ սպաննել, սպաննել՝ առանց պատժի ու պատասխանատու ու — թեան...*

*Նրբ այս գժոխային ապրու մտերուն արձագանգող երգեր կը հնչեն ներկայիս, պատահօրէն, շէն պակիթը հայրենակիցներ, որոնք կը բացաղանչեն ահա՛նաթեմք:*

*— Ներայր, մեր երգերն ալ լա՛ւ ախուր են. մեր նախորդները ուրախ երգ չէ՞ն ու նեցած...*

*Ոչ, շէն ունեցած եւ չէին կրնար ունենայ թուրքի բռնապետութեան ներքեւ: Կարելի չէ երեսակայից, որ գժոխքի մէջ հրեշտակային մեղեդիներ լսուին: Նրոք հոգեկան ապրու մտերուն հարազատ արտայայտութիւնն է:*

*Պէտք է հիանալ մեր ժողովուրդին վրայ, որ դարեր շարունակ կրելով հանդերձ քարքարոտներու յուժը, զուլո՛ւմ երգերուն հետ կրցած է հրեանէ նստել սիրոյ եւ աշխատանքի այնքա՛ն քաղցր մեղեդիներ: Հայ հոգին կրցած է շնչել, սիրել եւ ստեղծագործել ամէնէն անառնելի պայմաններուն մէջ:*

*Զուլո՛ւմ մին անմիջական հետեւ անքններէն մէկն է պանդխտութիւնը: Եա՛ւս հին ժամանակներէն ի վեր հայ ժողովուրդի դասակները ստիպուած են եղած գաղթելու սասար աշխարհներ՝ Հայաստանի մէջ արքայ կացութեան հետեւ անքով: Քու շահեան կամ ժողովրդական մեր երգերը սրտառու չ բառերով մեզի կը նկարագրեն արդէն զարեպին սրտի խոցն ու հոգին լափող կրակը:*

Կոո՛ւնկ, ու ստի՞ կու գաւ, ծոռայ եմ ձայնիդ.  
 Կոո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը շուցի՞ս...

*Դարեր տեսող նոյն ազէտին կրկնութիւնը կը գտնենք մեր նորագոյն պատմութեան մէջ եւ պանդխտութեան նոյն ցաւին կը հանդիպինք արդի աշխարհարարով մէւ աւրուած կարգ մը երգերու մէջ:*

Ա՛խ, բաւ է, հայն՛ք, միշտ այսպէս գերի.  
 Թողնի հայրենիք, դիմիլ օտարի.  
 Օտար սիրում է մեզ իբրեւ հիւրի,  
 Եւ մեր հացն ու ջուր դարձնում է յեզի...

*Պանդուխտի վիշտը համամարդկային բնույթ ունի, սակայն առաւելագոյն չափով եւ իր բոլոր մեկերով հայ հոգին սեփականու թիւնը ըլլայ կարծես կա՛նք արդեօք ուրիշ ազգ մը, որ մեզի շափ երկար բժշկած բլլայ պատմութեան այս բաժանէն: Օտար հաջը լեզի է, օտար ջուրը՝ հարամ, օտար ատղիքը լոյս*

չու նին, օտար վարդերը զուրկ են բոլոր ևս հմայքէ: Ո՛ւր ալ գանուի՝ գարիպը կ'ներազէ իր հայրենի օճախը, իր սարերը, իր ձորերը ևս ազրի բները:

Յաւը մեն է ևս երկկողմանի: Կա՛մ գարիպն է, որ կը պատմէ իր անսփոփելի վիշաքը, իր անսահման կարտաքը, կա՛մ Հայաստան ինք կը կանչէ զուսակները ևս կ'ողբայ, որ անսեր օտար աշխարհներ կը թափափին, օտարին կը ծառայեն ևս զինք կը մտնան:

Գանդխառն թեան գառնազոյն ապրումները արայայայտող մեր նորագոյն երգերը չու նին միջնադարեան ժողովրդական ասուներու խորութիւնը ևս արու հասի գեղեցկութիւնը: Կարելի է ըսել, թէ անոնցմէ սմանք անասական թոթովանքներ են, ո՛վ գիտէ՝ ո՞ր գեղջուկ գարիպին կամ կիսադրազէս արանասակցածին կուրծքէն գուրջութիւն: Այսու հանդերձ, երգողներու և համզայտ ասուողները պայպակ չըթնկրու անեղով ևս չու զու մով կը ջերմացնէր, կ'ընդլայնէր ևս կը բազմապատակէր անշուշտ անոնց իմաստը:

Յեղափոխութիւնը կանխող չըջանք կը յատկանշուի անգոր ասուողանքի, նկու և արամադրութիւններու, խոցոտու ամ սրտերու հակասապրուպաշտութիւններ: Մտայլ է հայոց երկիրքը ևս արեւանագի հառապայթներ շեն նշմարութիւն: Այս բոլորին կը տիրապետէ Վայր Հայաստանի բնիկու աս արաստու ասի պատկերը:

Մեր երգերը մեզի կը ներկայացնեն Հայաստանը խորհրդանշող այրի կին մը, որ նստած է աւերակներու մէջ, խոչտանդու ամ մարմնով, մտկերը արձակ, աչքերը արիւնով լի:

Գրախառնվայր մեր հայրենիք գործած է աւեր ու գերեզման-  
Մայր Հայաստանն է կու լայ սգաւոր,  
Թշուտ, ուսմակոխ այսքան դար է որ  
Արիւնով ցերկու ամ լիսնիք դաշտ ու ձոր...

Մեր սուրբ վանքերը քանդու ամ, խորանները պղծու ամ, արտերը հրկեղու ամ: Հին սրբու աստու թեան անկ՝ սու գ, սով ևս սեւաւ որ կեանք: Վարդի անկ փուշ կը բուսնի հիմա, թիւ մեր երգասանցները զանազան մեծարով միշտ պիտի երկնեն, թէ հայրենեաց փուշը քաղցր է քան զվարդ:

Հայրիկն ասաց. շիմ հայրենեաց  
փուշն անուշ է քան զվարդ...

Որքան ալ Հայրիկը այդպէս թու ևս իրմէ տուով ու իրեն հետ հայրերի ներքն ալ նոյնը կը կրկնեն, բայց ևս այնպէս գեղեցիկն Հայաստան չի գողցիր սգաւ որ ըլլայլ: Մայր Հայաստանը աշխարհի ամենէն ասուողան կինն է, որու ևս գու անկերը կիսաման կը քաշուտու ին իրքիս պանդու խո, օտար երկիրներու տակ, իսկ քովը մնացողներն ալ ամեն ժամ ենթակայ ևս արար թշնամու և զուսազիր գնդակին: Մայր Հայաստան՝ անցեալի փաստական թագու հին, աշխարհի հոգրներու և ցանկային, այդ հպարտ ու գեղանի կիներ նստած է աւերակաց մէջ, սուրբու և չղթայ ևս հակասին՝ մուր ևս նստասինք...

Գնա՛, բլթուլ, մեր աշխարհից,  
Էլ գու էստեղ մի՛ երգիր-  
Մեր օրը սեւ, մեր օրը ցաւ,  
Էլ էս երկրու մի՛ երգիր...

Վերջու յոյս խորհրդանշած է միշտ սերը ևս կեանքի հրնու անքը: Որք Մայր Հայաստան գերի է ևս այրի, երբ հայոց զիս ցապնական ուղիները կը ննջեն անյայտ խորութիւններու մէջ, երբ վայրայ թշնամին կ'աւեր ևս կ'աւարէ մեր երկրին բոլոր սրբութիւններն ու հարստութիւնները, ինչպէ՞ս կարելի է արարու չի կրցր լսել ևս այդ երգին ժայնակցի: Վերջու որ արտուրէ արիւն միայն կը հոսի. ևս Հայաստանի մէջ ամեն հայ սիրտ վերք ու նի, ևս ամեն հայ տուն՝ ծածր սու գ:

Յուսահատ համակերպումի տանող այսպիսի երգերու շնորք մէկ անգամէն պիտի փոխուի, երբ Նշնն յեղափոխու թեան զանգերը: Թու Նդ-թու Նգ պիտի կոչեն Հայոց սրահերը եւ Հաստաթի Նոր արշայոյս մը պիտի բացուի Մայր Հայաստանի խոնարհած դիտու ն վերեւ:

Մեր երգերու քննու թեկնն ի յայտ կու գայ, թէ տղային արժանապատուութեան արթնացու մը շատ բան կը պարտի Հայ ժողովուրդի պատմական տնցիայի ոգեկոչու մին: Մեր նախնիներու մեծազործու թիւ ննները Հայաստու - թիւ ն եւ ինքնագիտակցու թիւ ն կը ներշնչեն ստրկու թեան յու ծին տակ դոյս իւր ծուած գինաթափ Հայուն:

Հայ քաղերի, ՎարդաՅՅերի արիճից ԵՅԷ եւ ազատ...

Սէկն անգամ, որ կըզ մը մեր անկախութեան, պետականութեան, Թագաւորներու ն կամ Հերոսներու ն ոգեկոչու մը կը կատարէ, ինքնագիտակցու - թեան ցնցու մ մը կու տայ անշուշտ թմբած Հայ Հողիներու ն: Նու ստտ ճակատաներ վեր կը բարձրանան եւ նախատինքի ամօթով կորացած մէջքեր կը փորձեն շտկուիլ: Անցեալի փառքերը վերականգնու մի եւ Հաստաթի ազրիւր կը Հանդիսանան: Թշնամին տիրած է մեր վրայ, բայց մենք օժտու ան ենք զերազանց յատկու թիւ ններով: մենք շատ աւելի արժէքաւոր ու բարձր ազգ ենք, քան մեզ Հայածող բարբարոսները: Մենք իրաւ ու նք ու նինք աշխարհիս երեսին ապրելու իրբու ազատ ազգ, քանի որ մեր պայպերը ստեղծագործած են քաղաքակրթական յու երժական արժէքներ:

Հայկի թոռներն ենք մենք, Տիգրանի զաւակները, Վարդանի յաջորդները: Պէտք է բռնի, որ Վարդանը մեծ տեղ ու դեր ու նի Հայ ազգային երգերու ն մէջ: Անոր Հերոսական խոյանքը թշնամի գերազանց ու ժերու ոգէժ, անոր ազատասեր ոգին եւ գիտակից նահատակութիւնը ի սէր Հաստաթի եւ Հայրենեաց, ոչ միայն մեր պատմական անցեալը բուսաւորող անշէջ Հուր է, այլեւ տեւական ներկայու թիւ ն, Հողիները ջերմացնող կենդանի ապրու մ:

Ստրու կի մտայնութեանն մերապատուելու միակ միջոցն է նայիլ անցեալին եւ զգաստանալ: յիշել մեր պատմութեան մեծ ոգէժերը եւ արթննայլ: դաւնալ արժանաւոր ժառանգորդը անոնց սիրազործութեանց եւ Հպարտանայլ:

Այդ երգերու ն մէջ յաճախ նան, ստտ կայ, ինքնայանդ իմանու թիւ ն եւ մեղադրանք՝ ուզողուած անտարբերներու եւ ստրկամիտներու քաղմութեան. «ԷԼԵՐԻ՛Ք Այ, ԵԱՅԻ՛Ր, ԱՅՄԲ՛Ա լաուժիւն, ԱՅՄԲ՛Ա ԵՐԿԱՐ Բուճ. մի՞նչու Ե՞ՐԻ՛ ԿՐԻՅՑ ԿՐԻՅՑ ԿՐԻՅՑ ԿՐԻՅՑ ԿՐԻՅՑ...»:

Բայց ինչպէ՞ս ազատիլ այդ շղթաներէն, ինչպէ՞ս վերականգնելիլ:

Մեր երգերը կը ցոյացնեն դարերու տառապանքէն, արցու նքէն, միաժիտ յոյսերէն եւ դառն յու սախափու թիւ ններէ ժողովուրդին քաղած փորձառու թիւ նը:

Նախ այն, որ աղօթքն ու խու նկր ա՛յ անօգու տ են, Հրաշքներու շրջանը անցած է: Ինչպէս ոգրն ու կոծը, այնպէս այ մեղկ ու կրաւ որական կեցու ամբը, աղօթքն ու մոմը մեղ շին փրկեր: Դու ն քեզ օգնէ, որ Աստուած այ քեզի օգնէ: «ԷԼԻՅՅԻ ՂԻՅՅԻՅ ԵՆԳՅԻՅ Է ԿԱԽՈՒԱԾՅ: Մեփական կամքն ու սեփական ու մը միայն արժէք ու նին: Գանի՛՛ սերու նգ ներ ջերմեւանգ Հաստաթով կեկեցեցինե՛րու եւ վանքերու քարերը մաշեցուցին, սպասելով երկնային միջամտութիւ ններու: Զո՛ւր սպասու մ: Գիտակից ազգեր Աստուծոյ օգնութիւ նը խնդրելով Հանդերձ իրենք կ'իջնեն կոտի սպալարէզ եւ իրենց մեռքով կը լու ժեն իրենց դատը: Ինքնագիտակցութեան առաջին տարրական պայմանն է սախկալ:

Նրկորդ՝ մեր երգերը մեզի կ'ըսեն ամենայն Համոզու մով, թէ օտարեն-

րէն չկայ յոյս: Ելլի՛ց, եղբարք, ոչ, օտարը միշտ է օտար»: Լայ ժողովուրդի զգացական ումամբիզմը երկար ժամանակ յոյսի ծիածաններ անուաւ օտար հորիզոններու վրայ: Իր փրկութիւնը սպասեց այս կամ այն խալապալտ պետութիւնէն: սպասեց եւ շարաշար խարուեցաւ: Այժմ եկած է Հիմնական Համադրութիւնը — օտարը մեզ կը սիրէ իր շահուն Համար եւ մեզ կը յօգէ դարձեալ իր շահուն Համար: Դառն է հաստատել նման ճշմարտութիւններ ազգի մը Համար, որ տկար է, անզէն, թիւով քիչ եւ բնականօրէն օգնութիւն կ'ակնկալէ օտարներէն: Ասկայն բիրտ իրականութեան տուեալներէն խրատուած՝ Հայութիւնը ինքնապիտակցութեան հրաւիրող մեր երգերը կոչ կ'ընեն, որ Հայորդիները իրենց փրկութեան յոյսը որոնեն իրենց անկեղծ եղբայրութեան եւ զօրեղ միութեան մէջ: Լարիւր տարի ետք Չարենց նոյն բանը պիտի պատգամէր. «Լայ ժողովուրդ, էս միակ փրկութիւնը քո Խալապալան ուժի մէջ է»:

Քաղաքական որոշ Հաստատութիւն ձեռք բերած ազգի մը գերազանց վճիռը կը ձեւակերպեն ի վերջոյ այն երգերը, որոնց մէջ կը պտտենք կոտուելու հրաւիր: Խրիմեան Հայրիկի «Երկաթէ շերեփ»ին առակը ճամբայ կտրած է արգէն: Պայութեան գիտակից տարրերը եկած են այն հաստատ Համոզման, որ «միայն զէնքով կայ Հայոց փրկութիւն»:

Մենք պէտք է կոտուենք եւ ոչ լաց լինենք,  
Ազգիմ կարուստը զենքով ես խլինք.  
Այսքան դար լացիմք, ո՞վ է լսողը,  
Մեզ ի՞նչ շահ թերեց արցունքի ծովը:

Ինքնապաշտպանութիւն — ահա՛ միակ միջոցը՝ մարդ եւ Հայ անուանին արժանի բնթացք մը որդեգրելու: Հայութեան գահնները զէնքի լեզուէն միայն կը հասկնան: Խիղճ ու բարոյականութիւն սեանկացած են եւ արցունքը տկարներու բաժինն է:

Մեր ազգային-յեղափոխական երգերու ամէնէն յուզիչ տղերքը կը պատկանին «օրօր»ներու շարքի մը, ուր Հայ մայրը ո՛չ միայն շի մտածեր փրկելի գաւկէն կեանքը, այլեւ կը ջանայ փոքր տարիքէն անոր հոգին լեցնել վրէժխնդրութեան զգացումով, զայն մղել կոտորի եւ Հերոսութեան:

Դա շապիկն է այն քաղ մարդուս, բալա քան,  
Որ քեզի նա հայր էր կոչուում, օրօր, օրօր, բալա քան:

Կաթս քեզի կ'անեմ հալալ, բալալ քան,  
Երբ քաֆի պէս կոտուի սարվիս, օրօր, օրօր, բալա քան:

Վրէ՛ժ, վրէ՛ժ, չար ոսոխից, բալա քան,  
Խամսաորը քեզ կանչում է, օրօր, օրօր, բալա քան:

Նրգարանին մէջ տեղ գրաւած բոյոր օրօրներն այ նոյն ոգին եւ զգացում մը կ'արտայայտեն՝ տարրեր բառերով — «Մեծցիր, գորացիր, որ հայրենիքի գիմուոր ըլլաս»: «Կաթիս հետ մէկտեղ սես վիշտս ծծիր»: «Բարձր հասակիդ թող մայրդ մեռնի, դուստ ալ քու ազգիդ մեռիր»:

Հայ օրիորդը արժանի է իր քաջարի մօր: Մեր երգերը զայն կը ներկայացնեն Հերոսուհի: ան իր նշանանքն ձեռքն ու սուր շի կապիւր, այլ գիտէ սէրը պահել, որպէսզի իր սիրած երիտասարդը երթայ եւ կոտորի գաւտին վրայ «վերջ տայ, ստանայ»:

Ճշմարիտ Հերոսապաշտութեան շրջան. գեղեցիկը, վսեմը, Հիացումի արժանին ան է, որ գիտէ Հայրենիքին Համար գոհել ամէն բան, ե՛ւ տու՛ն, ե՛ւ ընտանիք, ե՛ւ սիրած աղջիկ, ե՛ւ կեանք:

Պետր չէ անշուշտ միամիտ բոլոր կարծեցու Համար, թէ ասիկա բնականաբար կարող էր բոլոր Հայ գիւղացիներուն Համար: Կային ակարծներ, վախկոտներ, հաստերներ, ինչպէս կ'ըլլան ամէն աստիճանի ամէն ազգի մէջ: Սուկայն երգը կը պանծացնէ խաղաղականը, գեղեցիկներն ձգտու մը:

Հայ ժողովուրդին Համար գանակը հասած է սոկորին եւ բնագոյնու մը ողորմած է Հայ հողին երգը պայտապին ու ժողովուրդին: Բարեպաշտ եւ Հեղահամբոյր Հայ գեղջու կը աստիճանին թափով կը ծառանայ՝ իր մարմինն ու հողին բանկոյ շղթաներուն գէժ: Երբեմն այդ բնագոյնու մը կը հասնի այնպիսի՝ աստիճաններու, որ կը ցցուի նոյնիսկ երկինքին գէժ: Ո՛ւր է արգարու թիւնը, ո՛ւր է աստուածային գառառտանը:

Յայտը կարած աստիճանին եւ կ'իկեցին, խարուած Հազար տեղամ, Հայը վերջնականորէն կարծես կ'որդեգրէ գեղեցիկ հաւատամքը:

Բազմաթիւ երգերու մէջ մենք կը գտնենք մտտին Հրացանին խոր սերն ու պաշտամուտները:

Քամի խոնարհ գլուխ տուիմք գայլերին,

Այնքան ծանր բռններ գրիմ մեր վզին...

Զինքը, այո՛, ամէնէն գառառտանին եւ տեղու տեղանք. բայց ինչպէ՞նք ձեռք բերել զայն: Հայտնի ենք, նոյնամասին օրերուն, շունչս իր հոտին Հզոր պետութեան մը աստուածը գինեական ակազու թիւնը: Իր բարանչիւր աստուածը եւ իր բարանչիւր փամփուշտ Հայ Յեղափոխական Կազմակերպութիւններուն արժանի է կեանքի մը գինը: Մտածթ է մեր հարուստ գառառտանը վերարժուածն այ: Ահա թէ ինչու Հայ երգարարը երբեմն գառնու թեան խոսքեր ունի անոնց հասցին:

Ձուզեմք մեմք ձեր սուկին, տուէք մեզ հրացան...

Զինքը գործածեցու գնահատութիւնը իրեն հետ կը բերէ նաեւ ազատութեան յայտն ու ձգտումը, որ կը թափուի կ'արժատանայ հողին եւ մէջ եւ կը գառնայ գրոշ ու անխիջ՝ աչքերու առջև: Երկէ ասկաին տարածք բառ ու պայտափար՝ ազատութիւնը հիմա նպատակ է եւ կարեւորութիւն: Ժողովուրդը սկսած է ազգ գառնայ՝ Հայրենիքի եւ ազատութեան խաղաղով:

Ազատութեան այն վառ սէրը

Թումդ արտասց իմ սրտում:

Իմ հայրենեաց սուրբ անուրը

Ինձ պատերազմ է կանչում:

Այնուհետեւ գէն ի ձեռին Հայոց լեռները ապաստանած բոլոր մարտիկները ի խորոց սրտի պիտի աղաղակեն. «Հայրենիքիս ազատութիւն տեսնիմ ու մեռնիմ»:

Քիչ ժողովուրդներ կան, որ մեզ նման սարկու թեան շղթաները գարեր շարունակ կրելի կտք, ազգային գարթոնքի ա՛յտան ծանր կրկունք մը ապրած բոլորն եւ անմիջապէս ետքն այ՛ ի սէր Հայրենեաց եւ ազատութեան՝ այսբա՛ն արիւն զուարթան:

Ինչ որ կը ներկայացնեն մեր կրկերը՝ բառ չեն, կրկ չեն, գեղեցիկ խոսքերու հանդէս այ չեն, այլ միացող սրտի կտորներ, Հրավառ անխիջ եւ արիւննու կեանքի մը տարեբային տեղաշարժ:

Զինեայ յեղափոխութեան շրջանը, իր հերոսներով եւ Հերոսամարտութեամբ, ամէնէն ասելի արտայատու թիւն կը գտնէ մեր ազգային երգարաններուն մէջ: Հայտնի են կեանքն ու հողին ենթարկուած են այնպիսի թեան: Նախկին լծացած անշարժութեան փոխարէն, խորհրդաւոր շարժումներ կու գան փոթորկելու Հայոց աշխարհի բարձրաւ անդակը:



Յեղափոխութեան առաջին շարժումները մանաւանդ յոյսի, հպարտութեան և սպիտակ հրապարակութեան թանկագինութեամբ կը լեցնեն հայ հոգիները: Չայն մը հնչեց էրզրումի հայոց լեռներէն: Թունդ-թունդ ելան հայոց սրտեր զէնքի շաշի մէն:

Հայ գիւղացիներու դարուց ի վեր սուր, զէնք չէր տեսած, Դաշար թողուց՝ սուր, երացան բախի տեղ առած:

.....  
Հոն կանգնեցին սուրբ դրոշակ արիւնով մերկուած, Անոր վրայ Ազատութիւն կամ մահ էր գրուած...

Առաջին այս շարժումները առաջին դանդաղաբար մները կը հանդիսանան աւելի տարածուած ֆեռատայան հերոսամարտերու և, որոնցմէ իրաքանչիւրը երգի մը կամ մէկ աւելի երգերու նիւթ պիտի հայթայթէր: Այլթու և, Աստու և, Վասպուրական՝ կը վերածուին հրեղէն անուրներու և կը հրեղենն ազատութեան ծարաւով տոտապող զերի ժողովուրդի մը հոգին:

Պ՛՞՞՞ սուրբ միամտութիւն...: Փողովուրդը կը հուսասայ, թէ «հայոց պարծանք» Սասնոյ ապստամբութեան ձայնը յսկի գարձած է «համայն աշխարհի կողմէն»: Դարձեալ ան կը հուսասայ, թէ հնչած է վնասկան ժամը, երբ երկու ան սարու կը՝ շղթայու ան հայ ժողովուրդը, իր շղթաները պիտի փչըլ և գանձեք հազարնէ թշնամիին:

Երբեմն ազգային ուսմանը կը հասնի այնպիսի՝ ծայրագոյն աստիճաններու, որ երբ շեքոսը կը մտնէ՝ սուլթան կը դողողայ:

Այսօր մեզի տարօրինակ կը թուին հայ երգերու և մէջէն հնչող զգացական այս գեղունակները, որոնք զուրկ են հարցերու տրամաբանական և ողջմտ բնուրումներէն: Սակայն անտեղի պիտի ըլլար անոնցմէ սպասել քաղաքական հասունութեան: Սակայն մեզ ան սրտու մեծեր: Երգը հոգիի հիշ է և ոչ թէ գաղափարներու վերլուծում: Մեր երգերու հաղորանական խորքը պէտք է ըմբռնել վերապահով շրջանի մթնոլորտը, որ գերակայեցած է հայրենասիրութեան, ազատութեան, վերածնունդի գիտնականացող ապրումներով:

Հայ ֆեռատային բարձրացած է լեռները, իրրիւ հինուուրց գիւցազներու յարուցեալ ողին: Գարծր կ'ուսայ, հերոսական արարքներ իրարու կը յաջորդեն և ի սէր հայրենեաց նահատակութիւնը հարսանիքի երթալու պէտքան մըն է:

Ազատութեան սիրոյն համար  
Նոր արիւններ բափու եցան,  
Անմեղ հայրեր ու գաւազներ  
Եկան այստեղ քաղուեցան:

Գերեզմանիս հողին վրայ  
Թափէ արցունք, իմ մայրիկ,  
Սփռէ ծաղիկ բուրումնաւէտ,  
Դստաստակ ե՛՛ս յաւէտ:

Հայ երգարարներ կերտած է հայ ֆեռատային տիպարը, որ գրեթէ բոլոր երգերու և մէջ կը ներկայանայ հոգեկան և ֆիզիքական նոյն յասկանիներով: Մեր բոլոր հերոսները առանձին-առանձին իրենց երգը ունին և կ'իջ անոնք անուանի են և պաշտամու նքի տարակալ գարձած սուրբ հերոսներ՝ գիտատարար իրենց նուիրում երգերու և շնորհի: Ե, որ հասած են ժողովրդական լայն խաւերու և և շահած անոնց սիրն ու հիացումը:— Ազրիւր Սերտը և Սոսէ, Գէորգ Զատուշ, Մուրատ, Հրայր Դժոխք, Վաղղէն, Վարդան, Եղեան, Բերի, Գեորգ Զատուշ, Մուրատ, Հրայր Դժոխք, Վաղղէն, Վարդան, Եղեան, Բերի,

Համազասպ, Եփրեմ, Բարդէն Սիւնի, Պետրոս Սերեմճեան եւ, մանաւանդ՝ Անդրանիկ: Անր ազգային Հերոսին փառաբանանքը կը հիւսուի բազմաթիւ երգերու մէջ եւ բոլոր միաններէն աւելի:

Անուն մը ժողովրդականացնելու եւ նուիրագործելու տեսակէտէն ոչ մէկ ուրիշ միջոց այնքան ազգու եւ վճռական դեր կը կատարէ, որքան երգը: Պատմական իրողութիւնները Հրաշագան առասպելի վերածող ազգական է անիկա, որ իրականութեան տուեալները կախարդանքի խորհուրդով կը լեցնէ եւ ժամանակին մէջ կ'երկարածող անոնց հերթաթային հմայքը:

Անր երգերուն բնօրէնը գիտած՝ Հայ Փետային սփառուած է գերմարդկային ուժով, խիզախութեամբ եւ տոկոս նուրբամբ. ան ճերկաթէ մարդ է ն եւ ճարտէ հոգի է կը կրէ կուրծքին տակ: Անձնական հոգերը, սիրերն ու երազները ոչ մէկ արժէք ու նին Հայրենիքի գազափարին առջեւ:

Ով որ քաղ է՝ ի՞նչ կը սպասէ,  
Արդէն ծամանակն է, թող գայ,  
Մահ-պատերազմի օրհաս է,  
Ով որ անվախ, քաղ է, թող գայ:

Քարէ հոգի, երկաթէ մարդ՝  
Հայածէ թող վատը մահարդ.  
Անվախ՝ քարի տակ շո՞ղորդ,  
Անսխալ խիզոր թող գայ:

Եվաթանքի եւ ժողովուրդի սիրը Հայ յիզափոխականին ժողովուն տուած է թէ՛ մայր, թէ՛ կին եւ թէ՛ գաւակներ: Կեանքի վայելքները փոխարինուած են մարտի գաշտին մէջ ստացուած վերքերով. զարդի տեղ՝ Հայ Փետային փամփու շաներ կը կրէ կուրծքին. ետքի փոխարէն՝ զէնք է զրկած, բարձի անդ՝ դլխուն տակ քար ունի միայն. իր հայելին ջինջ վտակն է լեռներուն, լապտերը՝ վառ լուսինը, իսկ բնակարանը՝ սարերն ու անտառները:

Չափազանց յուզիչ են մեր երգերուն նկարագրած թափառական այս կեանքին պատկերները, որոնք մինչեւ այսօր ալ երգողին կը փոխանցեն անձնուրաց եւ առաքելատիպ մարդոց հաստեղին ջերմութիւնն ու գոհողութեան ուրիշ:

Անձնապարզ բառերով հիւսուած գովքերու մէջ մենք կը տեսնենք Հերոսութեան մարմնացու մը կողմ Հայ Փետային, «Թիկունքը յայն, թիւերն ու ժգիճ», որ Հայոց լեռներէն կ'անցնէ հսկայի մը պէս, սարօտի տարածելով քիւրտին եւ թուրքերուն մէջ:

Փետայինն էր ու նուիրուած գրեթէ բոլոր երգերն ալ, Հակոտակ իրենց անարուեստ հիւսուածքին, կրօնական երկի զածութիւն կ'արտաշնչէն սուրբ գործին Հանդէպ: Անոնք մեր հերոսները կը ներկայացնեն իրենց գազափարական բաճրապոյն առաքելութեան գինու որներ, որոնք գիտակցօրէն զէպի մահ կ'երթան, որպէսզի Հայրենիքն ու Հայու թիւը ապառ ապրին: Անոնք շէն Հաստար արդէն մահուան, քրիստոնէութեան առաջին վկաներուն պէս: Հայրենիքը երբ ապրի՝ իրենք ալ յաւնտ ապրած պիտի բլլան անոր հետ:

Նպատակիս հասնիմ միայն,  
Թող գիտ հանձն կախազան.  
Կախազանէն խեղդուկ ձայնով՝  
Պիտի գոչեմ՝ ա՛խ, Հայաստան...

Ա՛խ, Հայաստան, սիրտս ու հոգիս  
Քեզ մտի իրիմ, բնդումէ՛,  
Թէ կարելի՛ թող քս մեռնիմ,  
Հայրենիքս, գո՛ւն ապրէ...

Ֆետայի դատնայն ու նահատակուիլը դարձած է մարդկային բարձրագոյն իտեղաց, որուն ն կը ձգտին երիտասարդներ հա նոյնիսկ հայ մայրեր: Անոսձման պայտամուտը հա հիացու մ կայ Ֆետայիին հանդէպ:

Վերհերով յի ցամ փիտա եմ,  
Թափառական՝ տուն չունիմ:  
Եարիս փոթան զէնքս եմ գրկել,  
Մի տեղ հանգիստ բուն չունիմ:

Արնոտ երկիր, սուգ ու շիւան  
Ինձ դու րս կանչեց փակ կնանկից,  
Տանդուած հայրենիքի սերը  
Չվախեցուց ինձ վտանգից:

Ահա հանգիստ հող կը մտնեմ,  
Յոյսըս դուք էք, ընկերներ,  
Շարունակէք մեր սուրբ գործը,  
Գաշնակցութեամ վեհ քաջեր:

Կամաւ որ գուհարերութեան հա հերոսապաշտութեան ներքին այս խանդը դեռ հասնու հասկնայի է երիտասարդներուն մաս, որոնց հողին կը փոթորկի վեհագոյն արարքներու ձգտումով հա արիւնք կ'հոսայ՝ հերոսական մարտնչութեան տենդով: Բայց ինչ որ դերագոյն հայրենասիրութեան օրինակ կը հանդիստանայ՝ առիկա հայ մայրերու գիտակից գոհողութիւնն է, երբ յանուն հայրենիքի փրկութեան արտագին խնդրանք կը ներկայացնեն իրենց տղան ճազգին մատաղք բնկու:

Այս ֆետայիներ, ցան ֆետայիներ,  
Ձեզ հետ տարէք իմ տղէն,  
Ձեզ հետ ապրի. ձեզ հետ մեռնի,  
Ազգիմ մատաղ իմ տղէն...

Մեր երգերուն ընդմէջէն յայտնուող Ֆետային ո՛չ միայն հերոս է լեռներու ն մէջ, պէն ի մեռիւն, այլև՝ բանտերու ն մէջ հա կախազաններուն առջեւ:

Անոր սիրոյն բանտն այ դրուիմ,  
Պալատ է ան ինձ համար,  
Ձեռներս, ոտներս շղթայ գարնեն՝  
Երջանկութիւն է ան այ:

Ոչ մէկ չափազանցութիւն կայ այս ու նման տողերուն մէջ: Կարելի է ըսել նոյնիսկ, ի՞նչ անտեք շատ սկար են՝ արտայայտելու համար մեր նահատակ հերոսներու ապրու մները: Արգարեւ, քանի՛-քանինն՝ րանախ մութ նկուղաներուն մէջ, ծանր շղթաներու տակ դանդաղօրէն մարեցան, բայց երբեք չկուրսլնցուցին իրենց հաս առքը՝ ճուրջ գործին հանդէպ: հա պէս քանի՛ ուրիշներ կախազանի յու անր իրենց վրին՝ խորիստ կեցուածքով վերջին շունչը փչելէ առաջ պսիցին. «Այո, Հայաստան»:

Մեր երգերուն մէջ ներկայացուցած հայ Ֆետային խորապէս մարդկային է՝ իր ապրու մներով հա նկարագրով: Թեւեւ կը սաս առանի «իրբիւ արծի» հա կը մտնչէ «իրբիւ տոխի», սակայն չի գազրի մարդկային ցուերով, յայտնուով, երազներով հա սերերով ապրելի: Յանձախ կը յիշէ ան իր օճախը, մայրը,

բոլոր, սիրելիները: Չունի հինաուրց առասպելներու մէջ նկարագրուած  
գերբնական դիցազներու բնոյթը: Ան Հայ ազգին գաւակն է, Հայոց պաշտպան  
սիրելի Ֆետան, Հայոց պատմութեան խորհրէն յարութիւն տաած Հերոսը, որ  
կը պայքարի՝ ձեռք բերելու համար իր ժողովուրդին մարդկային եւ ազգային  
տարրական իրաւունքները:

Անք երգարանի յիշատակական երգերը մեծ մասամբ կը բաղկանան  
անձակ, պարզունակ, գրեթէ նախնական արուեստով շարադրուած խօսքերէ:  
Անոնցմէ շատեր Հերոսական գրուողներու անմիջական արձանագրութիւնը  
կը կապեն՝ տեղով, թուականով եւ գլխաւոր Հերոսներու նանուտով: Տեսակ  
մը վաւերագրութիւն, որ կը պատկերացնէ պատահած զէպէ մը, կոխ մը, նա-  
հասակութիւն մը՝ տակաւին իր տաք ու միացող վիճակին մէջ: Արբեմն ամբան  
ու օրն անգամ կը յիշատակուին, ինչպէս, օրինակ՝

1907 թուականին, չճնաղ Մայիսի 27ին...

Նման երգերու մէջ կը գտնենք սրատուչ պատահարներու մանրա-  
մասնութիւններ՝ Հերոսի մահուան պարագաներուն կամ խուճրի եւ խմբա-  
պետի մը բնթացքի մասին:

Գարահիսար լերան կրծքին,  
Նա էլ ինկաւ վիրաւոր:  
Կուրծքը պատռած, սիրտը խօցուած՝  
Չար թշնամու զնդակով:

Պանք-Օթոմանի գրաւումը, Խանասորի արչաւանքը, Սասնոյ ապրա-  
տամբութիւնը եւ այլ բազմաթիւ Հերոսամարտեր անմահացած եւ ժողովրդա-  
կանացած են, շնորհիւ իւրաքանչիւր զէպէ արձագանգը տարածող այդ եր-  
գերուն:

Գնդակ օրոտաց Նայեմեր ամսուն,  
Պաշարուած ենք մենք, սիրուն իմ Սօսէ...

Անք գիտենք, թէ պատմական կէտ ունեցող այս զէպէներուն իմա-  
ցումը եւ իւրացումը նոր սերունդներուն կողմէ հնարաւոր պիտի չըլլար վե-  
րածել կենդանի ապրումի, առանց անոնց նուիրում երգերուն, որոնք ո՛չ  
միայն կը շարունակեն երգուիլ մինչեւ այսօր, հասարակական եւ հանգէտե-  
րու ընթացքին, այլեւ կը շարունակեն ոգեւորութիւն աւ հաւաք անընչել  
Խանասորէն եւ Սասունէն շա՛տ հեռու ապրող նորահաս Հայորդիներուն:

Արուեստի տեսակէտէն որքան այ խոցելի ըլլան մեր յիշատակական եր-  
գերը, այսուհանդերձ, համակող է անոնց ստեղծած միջնորդաբար: Այսպէս հա-  
ղորդականութեան մէջ մեծ տեղ ունի անկիծուութիւնը: Այդ երգերուն ամէն  
մէկ տողն ու ամէն մէկ բառը գրուած են արցունքով եւ արիւնով: կրնան զե-  
ղապետական ճաշակներ չգոհացնել՝ արցունքով եւ արիւնով ծածկուած զէպէ  
մը պէս, սակայն անոնց ճոթկուտ արտայայտութիւնը, ցախ եւ տառա-  
պանքի, յոյսի եւ հաւատքի ինքնարտաբերութիւնով կը թափանցէ Հոյիններէ  
ներս:

Գրեթէ կրօնական քերթնանդութեամբ զօրացած անսահման հաւատք  
մը ոչ ու չունի կու տայ մեր այդ երգերուն, որոնք կը զազրին քննադատու-  
թեան ընթացիկ չափանիւններու տակ իշնալէ, որովհետեւ կը ստանան իւրայա-  
տուկ սրբազորում եւ նուիրականութիւն:

Հահատակ իրենց գզացական տոմանթիզմին եւ գեղջկական պարզա-  
մըտութեան, այդ երգերուն արտայայտած գաղափարները ամբողջ ազգի մկ  
հոգիին ձայնը կը գտնան եւ զարթօնքի փողփողուն շեփորը:

Այդ երգերը իրենց սրբաշունչ գաղափարապաշտութեամբ, նուհատա-  
կութեան երկիւզած պատրաստակամութեամբ կը վերածուին տեսակ մը նոր  
օրերու շնորհափոխական շարականներու, եթէ կարելի է այդպէս կոչել:

Թէ կարելի՛ թող ես մեռնիմ,  
Հայրենիքս, դո՛ւն ապրե՛...

«Հայրենիք», «ազատութիւն», «ազգութիւն», — ահա՛ պարզ բառեր,  
որոնք մեր երգերուն մէջ կը վերածուին հրեղին գաղափարներու եւ ժողովուրդի  
կուտան այս աշխարհի բոլոր միւս արժէքները, ժողովուրդի կուտան նոյնիսկ սե-  
փական կեանքը: Մեր երգերուն մէջ ոչ մէկ ուրիշ բառ «ազատութիւն» բառին  
չափ յաճօն կը կրկնուի, եւ մարդ յուզուած ու հպարտութեամբ կը զգայ, թէ  
Հայ սրտերը ինչպիսի՛ խոր, առաջ եւ բոլորանուէր սիրով կը ձգտին ազատու-  
թեան իսկային, կը հուստանան անոր կարելիութեան, կը տենչան անոր արեւ-  
զակը եւ Պր փառարանն անոր անհասարելի գեղեցկութիւնը:

Իրենց ամէնէն մտայն տողերուն մէջ անգամ մեր յեղափոխական երգերը  
յոյսի եւ յարուսեան երգեր են նոյն ատեն: Հայ մարտիկը յուսահատիչ չի գի-  
տեր. անոր շրթներուն վրայ անկէքի բառեր գոյտ թիւն չուր. ան վստահ է,  
թէ ազգաբարանը պիտի բացուի ի վերջոյ, ամպերը պիտի ճեղքուին եւ Հայ ժո-  
ղովուրդը պիտի հասնի իր երազին:

Յեղափոխական երգերուն մեծ մասը մեղի կը ներկայանայ անսարա-  
զիւր, ժողովրդական երգերուն պէս: Շատ հասանօրէն անոնք օտելի զգործը-  
ւած են կուտի երթի մը կամ կուտի դարձի մը անմիջական ապաստութեան  
նկարչու, աշուղի կիսազրապէտ անձերու կողմէ, կամ միշտեւ իսկ կուտին մաս-  
նակցած Հայ ֆետայի մը ձեռքով:

Գրական-գեղարու եւտական տեսակետէն յեղափոխական երգերը չու-  
նին մեր աշխարհի ժողովրդական երգերու արուեստի խորութիւնը եւ գեղեց-  
կութիւնը, ոչ ալ աշուղական տաղերու հզօր ժայթքը: Անոնք նման են սրտի  
խորերէն արձակուած պարզուկ կանչերու. հատուկներ են, մագիթանքներ, թո-  
թովանքներ, կարօտի բացազանչութիւններ, հրաձեւչաի խօսքեր կամ կուտի  
խանդավառ կոչեր:

Անոնց լիզուն ոչ աղբատիկ է, խտուած օտուր բառերով, որոնք ժո-  
ղովրդական խաւերէ կու գան եւ ժողովուրդին ուղղուած այդ խօսքերուն մէջ  
անդ կը գրանեն բնականօրէն կը բաւէ անոնցմէ մէկ քանին մերկացնել իրենց  
եզանակներէն եւ կարգայ իրրի: պարզ շարադրանք, տեսնելու համար, թէ ի՞նչ  
կը նշանակէ ամէնէն եղերական տպուածները ամէնէն անտրուեստ եւ նախ-  
նական բառերու անկեղծութեամբ արտայայտել:

Բանտիս դռներն էին եօրը ելքերով,  
Շէնքն էր ամուր, պատած երկաթ փարեքով,  
Անտուտեան արշալոյսը ծագեցաւ,  
Մահուան ետքիս կուրծքէս ի վար կախուեցաւ:  
Փամազոյցս տուէ՛ք մօրս, իմ մօրս,  
Մի՛ բռնէ՛ք Արամ կախուած, այլ պառկու խտէ:  
Ահա կ'ընկնիմ սեւ գերեզման գրկել հող,  
Ի յիշատակ իմ անուր մնայ թող...

Այս սու նման գրուածքներ մեր ջիւղերը կը փոթորկեն ո՛չ իրենց շքեղ

պատկերներով, ո՛չ երևակայութեան թռիչքով, ոչ ալ բանաստեղծական այլ ճարտարութիւններով. անոնք մեզ կը յուզեն մինչեւ մեր հոգիին խորերը պարզապէս իրականութեան կենդանի հարգողագրութեամբ եւ ծայրագոյն անկեղծութեամբ:

Տեղ-տեղ անոնք կը հասնին մինչեւ իսկ եզրական ու ժղնութեան՝ բանի մը անպակաս խօսքերու մէջ խառնելով կամաւ որ նահատակութեանց վնասութիւնը: Նման պարագաներու, մեր երգերու իրաբանչիւր կազմուածքին, անյաջող յանգին կամ ուսմիկ խօսքին մէջ կը գտնենք արիւնտ իրականութեան բարախոյն ֆերմութիւնը եւ ողբերգականութիւնը:

Յեղափոխական մեր երգերը շատ քիչ անգամ կը հասնին բանաստեղծական կառուցուածքի եւ համադրութիւնի մակարդակ, որոնց մէջ երբեմն բանաստեղծական պատկերներու կը հանդիպենք, — ինչպէս՝ «Իրրիս արծիւ սուս առնում ես լիւ ու ժայռ, թնկացնում ես երկինք զետի՞ն տեմնալաւան», — յայտնապէս գարգացած գրիչներու կը պատկանին:

Կը գտնենք սակայն Հաս-Հոն ցրուած երգի պատարիկներ, որոնք առանց զբազան բաներ ու պատկերներ գործածելու, պարզութեան մէջ կը հասնին իսկական արուեստի բարձրութեան: Ահա ասիկ որինակ մը.

Այ չկայ բնկեր,  
Ինկած կուռի գաշտ,  
Տառապած, անտէր,  
Համբուրեց հողը քաղցրիկ հայրենեաց  
Ու փակեց աչքեր ցերեւ տստեղաց...

Աւելին պէ՛տք էր արդեօք՝ մեր աչքերու նաջի պատկերացնելու համար կոտորի գաշտին վրայ ինկած ջան ֆրանսիան, զերեստի հայ երիտասարդը, տակաւին ողբ միտմիտակ՝ շրջապատի սամայութեան մէջ: Ընկերները մեկնած են, ինք մնացած է միմիակ, անտէր, վիրաս որ կոտորելին պէտք, որոնք երամբ կը մեկնին: Վերջին հոտու արիւնը ու ժաքած կ'ընէ զինք հետզհետէ, ստու երկերը կը խտանան, շուրջը, հին ու նոր բազմաթիւ յիշատակներ կը խուժեն միտքը, որ հետզհետէ կ'ազատի: Ու վերջին շուրջը փշուղ առաջ կը համբուրէ հողը քաղցրիկ հայրենեաց եւ երկնքի աստղերուն ներքեւ կը փակէ աչքերը...

Որքա՞ն թախիծ, վնասութիւն կայ սա քանի մը տողերուն մէջ: Այս իսկ է արուեստը, երբ ժողովուրդի հաստերով մեկ երգիչը կը յաջողի ամենապարզ բաներով ներկայացնել կեանքի ամենազնւած մէկ պահը:

Հայոց յեղափոխական երգարանը մեր ազգային գարթօնքի եւ հերոսական մարտնչութեան իստուն վկայարանն է: Անիկա զեւ կը շարունակէ ազգային բազմապարհայն տղոց եւ աղջիկներու շրթոններէ վրայ: Հին կը գտնենք հայ ժողովուրդի բնագոյն մեկը, ստատապանքը, զի ցազները, զի ցազնամարտերը, յայտնին ու հաստաքը:

Մեր նորագոյն պատմութեան թեւաւ որ յուշարարը եւ յուշամատենան է ան:

Հայ յեղափոխական երգերը պատու են Հայոց ուխտի կեանքին, բայց անոնք իրենց կարգին ազգած են յեղափոխութեան եւ յեղափոխականներուն վրայ, մեր ազգային նկարագրին եւ հոգիին վրայ, ստեղծելով նորօրինակ գաղափարաբանութիւն եւ նորօրինակ պատկերաբանութիւն, որ կը բնութագրէ անձնութեան թեւաւ, որ հայրենասիրութեամբ, գաղափարապաշտութեամբ եւ հերոսական ոգիի պաշտամունքով: Անոնք սերունդներ ոտքի հանեցին, հոգիներ փոթորկեցին եւ զեւ կը շարունակեն ներշնչել մեզ յատկապէս Սփիւռքի օտար երկիրներուն ն տակ:

Ի. ԻՇԽԱՆ

### Յ. ՕՇԱԿԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

#### Ն. ՍԱՐԱՑԵԱՆԻՆ

..... \* \* .....

Ճ.

3 Նոյ. 926  
Նիկոսիա

Սիրելի Նիկոյ,

Երկու նամակներդ մէկ կ'ընեմ: Դուն մի բարկանար, վասնզի ոչ իմ անձկութիւնս ու նիս, ոչ այ տարիքս ու գործերս: Նամակներդ ու շաղիք քննութեան ենթարկեցի, հասնելու համար հոգիիդ գոյնին: Ատիկա ապերախտ աշխատանք մըն է երբ կը փորձուի յետ պատերազմեան երիտասարդներու վրայ: Եթէ սակաւ ինչաւս ամառ պէտք է հոգիիդ վրայ, անոր COLOGNE մը պարզեւ ելու համար, ու բախեմ որ մարմինդ, այսինքն նորերուն միտքը կազմուած է գրեթէ:

Անջրպետը որ ձեզ կ'ազատէ մեր երիտասարդութենէն: Մերը անհունապէս աւելի տառապագին էր: Կը վախճայինք արեւին շիտակ նայելու: Մերը անհունապէս միսթիք էր ու ուսմանթիք. մենք կիները երազի մէջ միայն կ'ունենայինք: Դուք տարբեր էք: Ֆրանսան ձեզ առած է առաջին օրէն ինչ որ մենք այ չենք կրնար առնել մեր ծերացած բազուկներու մէջ: Ազատութիւնը բնա մըն է հիմա մեր ուսերուն ու ահա որ է Տայսթովսկիին խորութիւնը երբ Գարամագով եզրայրներու մէջ Իվանին ներկայացող Տեսիլքի մը մէջ կ'ըսուի այն ճշմարտութիւնը զոր հիմա բանաձեւեցի այսքան դիւրութեամբ: Ու կիներ՝ գազազ մը զոր շարժած կը տանիս աչքովդ գերեզմանին մօտաւորութիւնը յափկումով:

Ասոնք հաստատումներ են սակայն ու բոլոր հաստատումներուն նման փոր չեն կշտացներ: Ես կը փափաքէի որ վարժութիւն բնէիք Փրանսերէն գրեթէ: Հոն բախուց կայ, շղթաներէն ապաստուելու: Քանի որ ոճը չեմք աք չէ, ինծի կու գայ թէ Փրանսերէնն ալ պիտի կաղապարուի նոյն կերպով: Ատիկա իմ սիրական մտածումս է: Վահրամիս այ նոյն բաները գրեցի: Հայրենիքին (\*) մէջ Վ. Զօրեանս ստորագրութեամբ երեւցածները իրը կը կարծէի: Ինծի իմացուց որովհետեւ գրելիք ու նիմ իրեն:

Մտքէդ չ'անցնիր սանկ հաւարուիլ հեղ մը, ճիգի մը կահուիլ ու պատկերի ձեւով բան մը երևան հանել: Ծամբազ լաւ է: Իրական ապրում մը, չոր բանը, որ նոր ինչայ հին վիճակներու վրայ: Քանի մը հողեկան քաղցկեղու մենք: Դուն ատոնց մտնեալու գծուարութիւն չես կրեր, քանի որ հողիդ ամբողջ փտութիւն (\*\*) մըն է: Ատիկ գուրս բերել արուեստի էջ մը: Ահա թելադրութիւններ որոնք հրամայական ոչինչ ունին:

Ինձի չ'իյնար արուեստի մասին խօսիլ այս ապառաժին դադաթէն: Դուն ինչ որ խոստովանութիւններ ու .....(\*\*\*) պիտի խառնես, չիլ մը ինքնատիպ բան ճարելու համար առկներու: Զիջեցնեմ քեզ այ այս յանձնարարութեամբ: Ոչ մէկ հարք պիտի գործածես գրելու համար: Մինակ բնարութիւն պիտի ընես վիճակներու: Կահանք խորքն է որմէ կը աստապիս Պոլսէն սկսեալ:

Տարած մը բառ էիր գործիդ մասին: Կ'ապրիս ըսել է ու կը տափակնաս: Բայց մենք աւելին եւրէ որ ուզենք բոլոր ձեզի պէսներէն: Զի բաւեր կնկան մը փէշերը առիտակամածին դամել ու հակիլ անոր, կհանքը ուրիշ բան է ու դուն ատոր համը ստած ես: Ինքզինքդ ժողով: Ու մտածէ կայիտով ու տակորով հաստնայու: Ետքէն է որ ուզեցին պիտի խորհիս: Կ'ուզեմ որ յառաջիկայ նամակդ ըլլայ սանկ ամբողջութիւն մը, ուր կարենամ նշել վատահու թեամբ, տեսնելու համար հոն ան գոր գուշակած ըլլայ կարծեցի եւ որմէ դեռ յոյս չեմ կորած: Գրէ ինձի ընկերներէդ, Բարիգի աղաքներէն, մեծ ու պզտիկ խենդերէն ու փտառարութիւններէն: Ըսէ անոնց որ Օչականը կը ներէ ամէն բան, ամէնուն, բացի իրմէն:

Սիրով  
Յ. Օչական

(\*) Կ'ակնարկէ Պոսթընի «Հայրենեք» ամսագրին:  
 (\*\*) Կահանքի քաւ:  
 (\*\*\*) Անընթեռնելի բառ:

ԺԱ.

1927 Մայիս 18  
Նիկոսիա

Սիրելի Նիկոլ,

Առի գիրքդ ու ներփակ ոտանաւ որը: Ինչ որ գրեր եմ քեզի տեսնին արձակներուդ համար, չես մոռնար: Ոտանաւ որիդ մէջ չեմ հաստատեր կհանքին ուղղակի, սպաննող չփու մը որ ժպիտի մը պէս պէտք է բացուի արուեստի գործին մէջ: Այս է կախարդութիւնը: Մինչդեռ քու տողերդ ծանր են այն ծանրութեամբ որ իրականութեան դարուն է ըսելու կու գայ: Զեմ իսկ հետաքրքրուիլ թեքնիքով որ ծիծաղելի է յանախ եւ որուն տիրացու մը օգտակար է միայն երբ խորքը ճարած ես:

Արդ քեզի պակասող խորքն է: Հոս մի յու սահառի: Վասնզի անիկա մէկ օրէն միւսը չի կազմուի: Տարիներու արցունք եւ դառնութիւն պէտք են որ-



պէտքի քիչ մը բիւրեղ նստի ամանին տակը: Եւ այն է նաեւ հոգիին համար: Էականը տատապող հոգի մը, խուզարկող ու անհանգիստ հոգի մը ու նենախն է: Ու դուռն ինձմէ լաւ պէտք է ճաննատ քեզ: Եւ այն է ձեռքերու մեծ ծովին, ու պիտի տեսնեմ որ օրին մէկը պիտի գայ ան, ան որուն ընդ նշմարանքն ու նիւ, եւ որ կը խուսափի քեզմէ: Ամբարտ բոլոր այն զգայութիւնները որոնք ատանկ պահերու պիտի թափին մէջը: Ու ատոնց պահեստը միշտ շահեկան կ'ընէ նոյնիսկ ոչ-գրողի մը ոտը: Եվ օպէն (\*) գոհ մնացի շատ:

Ինձի գրէ նիւ թական կեանքէդ: Ինչո՞վ կը զբաղես: Ինչ կ'ընեն ընկերներդ: Եփման մէջ՞ ես ուրիշ տղոց հետ: Վերջապէս սա մեր jeunesse-ը ինչ երազներու կը նայի:

Իմ մտախոյնդ ու նիւ ասելիցնէիք: Մտտ մտտ խորոջ նաւն եմ, որուն գլուխին ճակատագրին փոթորիկը կը պոռայ իր սառն երգը: Այս ընկղմումը գծողակ է, բայց անխուսափելի: Դեռ կը փորձեմ գիմանալ: Մինչեւ հ"րբ: Ով գիտէ:

Սիրով  
Յ. Օշական

(\*) Մեզի ամենօր եւ ամենակնայի բառ:

ԺԲ.

4 Օգոստոս 1946  
Երուսաղէմ

Սիրելի Նիկոյ,

Գիրքդ կարդացի: Վարանեցայ պահ մը գրելու, վասնզի կրնայ այս գիրքը արժանանալ քու հանրամատչելի յիմարութեանդ, կամ ուրիշ նոյնքան իրաւ հասանականութեամբ մը, ու չազիր քննութեանդ: Առաջին պարագային ցաւը պիտի աւարէ տրուած ժամանակին (որը միայն մէկ ժամ արատուած եմ գրելու եւ այս նամակը ինձի կ'արժէ ուրեմն իմ աշխատանքի երկու ու աւելի օրեր): Երկրորդ պարագան Օշականը պիտի բնէր իրեն հաստատելով: Ձեռնարկ-մտցնելը դէպքերը: Ա. զրարու մէջ<sup>(1)</sup> վերջը լրջացած էր անուեղ (թէեւ ես քեզի 25 տարի տուած էի Պոլիս, ինքզինքդ զանկու) իմ նկատաւման մէջ: Գեղեցիկ ու իրաւ սկիզբ մըն էր, այնքան իրաւ որ վախ ինկաւ մէջս որ մահան մէջէն կը խօսէիր: Կեանքը հերքեց իմ վախերս: Յետոյ, յիմարութիւններդ: Մեր կողմը կ'անխնայ զայնպիսի թեան հեղինակը շիլլին ներքեւը զայ բռնալուծի: Ձեռն չի շահագրգռուի բունութիւնը դէպքերուն, կեանքին գառնութիւնը: Գիտեմ թէ ինքզինքդ չկրցար պաշտպանել սոսկեմէն որ արամտութիւնն էր, համոզ խածնելը, հայնոյնու բարձր բարեքները: Ձեռն չիտոյնիցիր ու Պարտականին հետ քեզի յուր գրկեցի Բարից որ գոհ էի հայնոյնութեանց գեղեցկութեանն, բայց ասելուցս ցած էի որ տեղ մը չէիր երթար այդ համրով, շատ շատ Եանուսին հետ արճարաններու մէջ կը խնդայիք ու կը մարտիք ձեր վայելքը: Վէպդ մէջտեղ է<sup>(2)</sup>, եկաւ Տեղատուութիւնը: Ձեր քայլած: Ոչ միայն չէր նորոգուած Անդրուր, այլ քերթողի յատակ պատկերը (արդի ոչ ատափին հատողին) հնթարկուեցաւ որոշ շեմ բոնտ աղմուս, այլ սանկ լճու բանի մը: Ու ասիկա ցաւ էր ինձի: Ցաւ էր վասնզի Նիկոյոյս բանաստեղծ մը բոլորու բոլոր

պայմանները կը լրացներ: Տեղատուութիւնը կ'արժէ Բարիզէն բերած իր շատ սրտ վկայութեամբ: Կրնար արձակ այ գրուի: Այսինքն զիրքը կը պաշտպանուէր ծանր ապրումներէ թայց ժամանակ էր յիմար անփութութենէն: Բան մը, նոր, իրաւ, զ պող այս զիրքէն ես պահած եմ իմ ապաւորութեան մէջ: Քու սերունդիդ մէկ երեսն էր: Ու հիմա (չեմ անսած չէ քերթուածը) Միջնաբերդը, Նախ պէտք է բնականոն որ ոչ մէկ չէն, ցաւ, նկատում, սպասում ու նիւմ չեզմէ: Կը գրեմ ինչպէս պիտի գրէր հայր մը իր տղուն որմէ ծանր հարուած մը ըլլար ստացած: Բայց չէր զաղբիւր այդ ազուն հանդէպ հոր զգացողութենէն: Նոյնութեամբ այս զգացումը կը բաժնեմ Պետրոսին համար ալ (1946ի պլի-ցը զիս ցաւ ցուց, ոչ որովհետեւ բան մը կ'արժէր, այլ կու գար օտարներէ, այս սինքն ուրիշ ճակատէ ուր գրականութիւնը ոչ միայն լուսնի գոյութիւնը, այլ Օչականի տաղանդին արամազծօրէն հակառակ ուղղութիւն մը կը մշակուի, տափակին, բռնազբօսին, կեղծին պաշտամունքով: Դուք իմ ճամբէն քայլողներ, ձեր իրաւունքին մէջն էիք ձեր ուսուցիչը անցնելու: Գործուած տղեկութիւնը միայն կը յանձնեմ ուղադրութեանդ ու կ'անցնիմ): Այսինքն անպայման պիտի ուզեմ որ ձեր անունին վայել գործերով զիս մղէք զիջումի:

Հիմա, Պոլսէն քառորդ զար է անցեր: Միջնաբերդը պարտաւոր էր զիս ՆՈՒԱՃՆՈՒ

Կու գամ շատ արագ քանի մը նկատողութիւններու:

ա) Կը կարդացուի զիրքը: Եստ էն այս հաստատու մին զպայմանները: Թէեւ երկու խոշոր հատուած (Իւմֆերը եւ Սասունցի Դաւիթը) կը պատկանին պատմութի կայուններն: Բայց զիրքին բախտը նիւթէն չի գար: Կարգաչի, քահի մը էջի վրայ հագի անգամ մը ընդմիջող *fausse note* է մը: Ուրեմն կը գանուիմ ձեզի մը առջեւ. աւայնեմ դժուար է ձեր, բանաստեղծութեան մէջ, քանի որ անոր հակահիշ, տաղաչափութիւնը, պատրաստ վաւերագիր մըն է, չիտթութիւն ստեղծող: Քու Միջնաբերդն ալ կրնար արձակ գրուի: Բայց ահա տարբերութիւնը: Եունչով (ըսել կ'ուզեմ երկար) քերթուած մը պարտաւոր է, կարդացուելու համար, ինքնիրեն ապահովի: Վիպական տարբը, պատմող քերթուածին մէջ (*narratif*) մեծ բանաստեղծը միայն կը յաջողի բարձրանալ բանաստեղծական թելագործութեան: Ու, առանց մեծ, նոյնիսկ իրաւ բանաստեղծ մը ըլլալու, դու ն յաջողած ես վիպական տարբը տանիլ, կրել, որչա հաստեղծականութեամբ: Այսինքն ըրած ես ստեղծում: Եթէ ուզեմ խորացնել սուլաւորութիւնս, փնտռել թէ ինչի մէջ է այդ ստեղծումը, թերեւ զգամ գժուարութիւն: Բայց ի վերջոյ կը գտնեմ որ, չես գրած որեւէ աւփակ տող, որ չի նշանակեր անշուշտ նոր տող գրել: Բայց կը նշանակէ թէ բառերու ն բոնու-թենէն ջանացած ես ինքզինքդ ազատագրել: Յետոյ կայ երկրորդ կարեւոր իրողութիւն մը. - ատիկա պատմութիւն *cliché* գնացքը խորտակելու մնայուն փոյթը: Դու ն մանուկ մը չես որ այս հաստատու մին բուն բառը չգտնես իսկոյն. - ինքնատուրքեան տապալակը: Արդ ինքնատուրքութեան ամէն կամք, խնամք, կիրք կը վարձատրուին: Քու ժօտը չի մը անտալ: Երրորդ իրողութիւն՝ նիւթին մէջ նկատուած սուտ գոսթիֆին քանակն է, այրելու չափ թոյլ միտերը պատմութիւն: Հրահաւը, կրկին գրուելու ատեն, չքեղ յաջողանք մը պիտի ըլլար, ու գարձակ պիտի պարտադրէր թեզի այդ ճիգը: Ըսել ու գաժաւ ան՝ որ քու սովորակուն թափթփածութեամբ չես յորինած, չես խնամած կտուտ-ցումը: Ու այդ մէջքը ծանր, աններելի, ահա անկարող է մնացած պատմութիւն կործանելու (երկու պատմութիւններու ն համար ալ): Ուրեմն կ'արտօնուի խաւար-նելու փառքեր, եթէ երբեք Հրահաւը, Ս.Գ.ր կառուցած ըլլայիր:

Գիտեմ թէ հետաքրքիր ես կառուցում տարազով: Կախարդական ոչինչ ու նի բար սակայն: Յանուն ինքնատուրքութեան զեղծած ես գաւորները: Լաւ, Բայց պարտաւոր էիք քու հարտարակտութիւնդ այնպէս մը կուգժուկերպից որ

պարտադրէր ինքզինքը: Կարգացուիլը ինքզինք պարտադրել չէ: Ոչ միայն պիտի կարգացուիս, այլև պիտի խոսիս, գրդուես, նեղես, միջես որ ըմբնրցողը անկարող ըլլայ իմֆզիմֆը պաշտպանելու եւ յանձնուի քեզի: Ահա արուեստը: Ամեն իրաւ բանաստեղծ այս լուս պայթարով կը շահի իր տեղը մեր մտքին մէջ: Անգամ մը որ բնագունիս թէ չես նուանուած, մնացած գեղեցկութիւնները խոստումներու կը վերածուիս: Ու աստեղ այնքան առատ են որ նոր գիրք մը կ'երաշխաւորեն արդէն մտքիս մէջ: Բայց ջու քննադատի որոճառութիւններդ քեզի համար վնասակար են միայն: Ուրեմն Միգմարերդին առաջին արժանեքին վրայ այնքան մը լուսարանութիւն բաւ համարէ: Կ'անցնիմ ուրիշներու:

Չախող է Սասունցի Դաւիթին նորոգումը: Կայ ջու դառնութիւնդ, կ'ընդունիմ, բայց չկայ ինքը Սասունցի Դաւիթը: Մի առարկէր թէ ամէն մարդ Տոն Գիշոր մըն է (Թուրկենիէֆ) ու Սասունցի Դաւիթ մը: Բու Սասունցի Դաւիթդ, բարիգեան մթնոլորտին մէջէն, ահա, հասնաբար փառասիրածդ: Բայց մեր փառասիրութիւններն ալ ենթակայ են չափի, սահմանի: Մտեցած ես կենթ մը արուակնուով, մեր օրերու Դաւիթին: Բայց խորհէ Հարիւր արար վերջին: Ջայն կարգացող մը չի կրնար ջու Բարիզդ զգալ, ինչպէս անոր արգանդին մէջ ձեւացող սփիւռքի քերթողը ազատագրել: Այն ասե՛ն: Այսինքն ի՞նչ կ'ապացուցանէ Ա.Ի.ը: Տուր հարցումը ու բաց գիրքդ: Պիտի գտնես որ անոր մէջ չքեղ սողեր կան: Կան քանի մը իրաւ ալ վիճակներ (նաքոքս յու նէր իրաւունք Միներ ներկայացնելու փողոտուած, քանի որ Հնքիսթը շատ յատակ է այդ ուղղութիւնէն: Այս դիտողութիւնս կ'ընդգրկէ բոլոր նորոգման փորձերդ, որոնք վրայած են, գանցելով Հեքիսթը, բայց չլլայով 1950ի Բարիզի ազան): Բայց չկայ նիկուլը, Փարիզը, Սփիւռքը, ոչ ալ՝ ջու ժողովուրդիդ խոսացուած իմաստը: Ահա դիտողութիւններ որոնք անկախ են կարգացումէն: Գարիքէն: Չեմ կրնար արդիւնէ որ չմշակուին մեր միթերը: Բայց կը պահանջիմ որ անոնք կամ ընդհանրացան, կամ ճշգրտորէն մասնատուուին: Ի՞նչ փորձիչ նիսթ՝ Դաւիթ մը Բարիզ, 1950ին: Կարելիութիւն: Անչուտ: Ամէնէն առաջ ինքը նիկուլը, որ անպայման փանցիներու տիպիկալը պիտի լիտի Դաւիթ մը անցնելու համար, այլ պիտի ըլլայ ու է անոր պէս յիմար, բարի, սրտոտ, աննկատ, հոգիին մէջ կոտիին գուպանակը, մարմնոյն մէջ կիրքերու ն գուպարը ու կամքին մէջ կտոր մը խմոր: Այս տարրերով նիկուլ-Դաւիթը մեկիքներ չանի տապալելու, այլ մեր օրերու կիները, պոռնկութիւնները միտքի ինչպէս նկարագրի, շահի, ցանկութիւնները, անարդարութիւնը, գրկանքը, վայելքը, այնքան քիչ բայտուած: Հերոսները որոնք կը մեռնին: Գազանները որոնք այդ արիւնով կը յղիանան: Փաղաքակրթութիւնները: Մեր պատրանքները: Ահա քեզի նոր երկրայիմ կատարկերգութիւն: Բայց ասոնք կը նու տան բարձր, երկար, յու բլ արտադրութիւններով:

Մի ըսեր թէ Պոլիս, Կեղրոնական Վարժարանը չէ Բարիզը: Ժողով թիւ յարանքներու ու պիտի գտնես թէ իրաւ կ'ըսէ ջու ուսուցիչդ: Կ'անցնիմ Միգմարերդի անձնական բաժնին ու կ'տոնեմ բախտովի 129ի քերթուածը: Ա. բաժնինին քսան տողը կ'ենթարկեմ վերլուծման (վերլուծում մը բառերը կը պահանջէ անփոխարինելի, այսինքն անպայման անփոփոխելի): 1 առդին առանձինը կրնայ գեղջուիլ: 2 առդին՝ կեանքիս անհրաժեշտ չէ: 3ին գոյութիւնը՝ պարզ բառ մըն է: Իին երկու նքի ուսր պահերը կրնային շարուիլ: 11-12ը անորոշ ես (բանագրութիւն՝ գարբին քամին: Ես չեմ վախճար օրեւ է յանդ ցնու թեմէ, պայմանաւ որ արգարանայ): 20ին մէջ տարածութիւնը կը տկարացնէ սու գումը: Մնացեալները անառակելի: Ու ահա կ'ըսու: Եթէ երբեք ջուան այդ տուգրուս մէջ այդ անատարկելիները ըլլային նոյն ատեն անդիմալլելի կ'ըրդով հալ, ես պիտի մասնէի սահի անցնելի գիւրու կներու ն

գրային ու հիանալի ինքի նոր մատուցումներն: Բան ճը որ չէ իրաւ, քերթուածիդ համար: Կը մնայ եզրակացութիւնը: Հիմնական նորոգման խնամք ճը անհրաժեշտ կը նկատեմ, որպէսզի սա վրդովի, իրաւ պատկերները բլլան նոյն աստեղն անվերածելի վկայութիւններ: Ինչպէս կը տեսնես, Պոտլեոսի քաղաքին մէջ, Պոտլեոս փառասիրող հայ բանաստեղծէ ճը իմ պահանջը ամէնէն առաջ անաւարակելի, երկրորդ արար անպիմապրելի նորութիւնն է: Ու այդ նոր ազան կայ մէջդ, իր իսկ փառասովը: Այս առգերուն հետ կ'արուանայ վահան թէքէ-հան որ քու շնչած ազրէն ու փոշիէն մեզի կտակեց Հրաշալի Յարութիւնին անմահ մասերը, Գ. Վարուժանը՝ որմէ ուրիշ նուաճում է Գողգոթայի ծագիկ-նիրը: Կրնամ ջշել տակաւին Սեւակը: Մայնգեանը նուազ կատարելութեամբ, բայց վիճակներու աւելի յստակ ճնշումով ճը:

Ուրեմն, շատ սիրելի նիկոյ, քեզի կ'առաջարկեմ քեզ: Դուն ապրած ես կենալը, դարեւում մահուան, սնկրին, սարսափին ժանդերմութիւն: Կը ճանչ-նաս Պոտլեոսին ճամբորդութիւնները ու նոյն աստեղն որեւէ երկրէ ճը պոկուած անուշիկ ծագիկի ճը պէս հողի կը կրես: Ե՛ր այդ հողին իր ամէնէն մերկ կերպարանքներուն ասիկ, միշտ այդ Բարիդէն: Պիտի տեսնես որ քու լեզուդ շքե-զօրէն պիտի գոյ բուսայ այդ մերկութիւնը մեզի պարտադրելու: Հետո, ճոտ ու ճանսօթ բոլոր կազապարներէն, .....<sup>(1)</sup>: Ամէն մարդ հարիւր անգամ աւելի բանաստեղծ է քան մէկամանօթ տաղաշափը, թող ըլլայ անոր անունը նոյն իսկ Հիւկօ ճը: Ամէն տառապող մարդ ունի իրաւունք այրող այդ տառապանքին փորձառութիւնը ճատուցանել պանդոյրներու վայելքին:

Այնքան շատ են ըսելիքներս ու այնքան ջիշ իմ ճամբանակը: Իմ ու ճերը այնքան անհաւատարիմ՝ այդ ամէնը թուղթին իսկ կապելու: Եւ Օշականն ալ մէկն է այն հարիւրուոր նիկոյներէն որոնք պարտաւոր են պատրանքներ աս-կեզօծել: Կը սպասեմ

ա) — վէպի ճը, որուն մասին Բայու հանին երկտողին մէջ, Որբու նիին երկտողին մէջ բոսած եմ արդէն:

բ) — պահին երբ պիտի իջնեմ հպարտութեամբ կրկէս, սփիւռքի մէջ իրաւ բանաստեղծ ճը ողբունելու:

գ) — գրաստացած, թօմթօշուրիւնը, հայութիւնը, հայեցուցած նի-կոյի ճը, որ սա ու ան խաննելու, ստոր անոր հանկի բլլայու սիրոյն.....<sup>(2)</sup> բաներու իր զիջու ճը զնէր արու որ, արի, զեղեցիկ էլոյթներով:

Չեմ գիտեր, ինչ բնդունելութիւն պիտի բնեւ այս առգերուն: Ինձմէ էլ ան է իմ պարտը: Օրուն կիրքերը անշուշտ կը պաշարեն քեզ ալ: Երատը հող անիմաստ է: Պիտի ուզէի որ ճոտմէր Հայաստանին: Հոն տառապանք-նեկուն գերազայնը, փորին տառապանքը պիտի խեղդէր քեզի: Յետոյ կայ նոր, իրաւ բաներ ընելու այ պատեհութիւնը: Հետեւին չնս: Երեւի է ինքի մաս-ծել որ հին մտերմութիւնը պիտի ջանաս բարեբեր ընել: Հայրենիքին մէջ քու ձեւովդ արու հատ ճը չի փառաւորութիւն, բայց կրնայ խթան ճը բլլայ: Ամէն պար-բայի անձանօթ եմ մարմինիդ պայմաններուն, որոնք կ'արժեն այս ճամ-բուն վրայ: Հողիդ պէտք չեմ զգար վերլուծելու քեզի:

Քանի ճը սող իմ մտիս: Մանր դառնութեան ճը մէջ կը սպասեմ մահ-ւան: Քանի անոր կը ճօտենամ, այնքան պղտիկութիւնները կ'անգայանան իմ նայուածքին ճիրէն: այնքան անուշութիւններ, մեծութիւններ, զեղեցիկու-թիւններ, հրաշքներ կը պսակաւորութիւն ու ինքի կու տան ցաւերուն ցաւը, այս ամէնը առնել հող ասնելու: Աւելին կը լուսեմ:

Կարգա՛ Պեարտին այս նամակը: Հոս ամէն բան կը պատկանի եր-կու քննող:

Սիրով  
Յ. Օշական

Յ.Գ. Որոշեր էի շանդրադատնայ Որբուհիին (ժողովուրդ): Գուն են՝  
 ամբաստանուածը: Տասը սող կարգայէ վերջ մէկդի նետեցի: Տափակ էր  
 գրուածը: Եթէ Նիկոյը ինքզինքը լաւ մտազէ ընելու համար, բրած է զիջումն  
 ալ տափակնայու, ուրիշ խնդիր է: Ամէն պարագայի, հոգեկան անկու մի  
 փաստը չի գարձացնի զիս: Անր հոգիները արուած են մեզի որպէսզի զանոնք  
 աղտոտենք: Բայց դժուար պիտի հաշտուէի մտքի ալ անկու միին: Աս ալ իմ  
 միամտութիւնս: Կարգացողը ինծի ըսաւ, թէ Որբուհիին կը խօսէր Յօթերով,  
 իբր թէ Պոլիս իմ դասերէս: Արդ ես Պոլիս քեզի շարադրութիւն եւ բացատրեալ  
 բնութեացում կու տայի: Հայ գրականութիւնը ուրիշներ կու տային: Հետեւա-  
 բար սուտ: Ոչ նօթ: ոչ ալ ուրիշ բան: Եղածը պզտիկութիւններու ապարանք  
 մըն է: Քեզմէ սպասելի՞՞

— անտարակոյս, քանի որ փաստը կայ տաք տարի տուաջուան:

Բայց

Ու հոս կը սկսի Օշականը

Նոյնիակ այդ պարագային Օշականը վերի նամակը չի հերքեր: Կը ցաւի  
 իր միամտութեան ու կը շարունակէ հաստալ մեր գրականութեան: Ես չեմ  
 կրնար խժած ըլլալ Շաւարշ Միսաքեանին վրայ, այն պարզ պատճառով որ  
 անկէ կտոր մը չեմ ենթարկած վերլուծման Կեդրոնականի որեւէ դատարանի:  
 Շաւարշը ինծի թշնամի չի նկու այս ճիղճ վարդապետութիւնն ալ Որբուհիին  
 զոհուանկութիւնը:

Հ.Գ. Միութիւնը հակառակորդ Օշականի: Ինչո՞ւ չէ: Այդ ալ իր գեղեց-  
 կութիւնը, քանի որ երկինքէն ու երկրէն հալածուած գրադէտ Օշականը  
 պաշտպանութիւնը պարտաւոր է փնտռել... դժոխք, որ չի կրնար ընդունել իր  
 ուրուականը, գայն շատ ինքնատիպ, շատ սեւ, շատ անճանաչելի դանկուով,  
 համաձայն իբեկն donnécsին զոր հայ մամուլը յօրինած է, ի վայելու մն բոլոր  
 ու զղափառներուն:


Ամէն պարագայի այս պզտիկ դառնութիւնն ալ, որպէսզի պակաս բան  
 չմնայ:

Նոյն

- 1) Կ'ակնարկէ «Ամերիկեանի մը գրաւոր»
- Ֆերթոզագիթիմ:
- 2) Աճըթեռնիի բառ:
- 3) Այս բնագծուած բառը կը գտնուի չոր-  
 բարդ առիթն մէջ:
- 4) Աճըթեռնիի բառ:
- 5) Աճըթեռնիի բառ:

Յ. ՕՇԱԿԱՆ

(Շար. 3)



ԳԻՏԱԿԱՆ ՆՏԱՇՐՁԱՆ  
ՆՈՒԻՐՈՒԱԾ  
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ  
ՄՆՆԻՆԱՆ 275ԱՄԵԱԿԻՆ



Սայթ-Նովայի ծննդեան 275ամեակին առթիւ, գերկերս Երևանի մէջ տեղի ունեցած է գրատպան նստաշրջան մը:

Նստաշրջանին բացումը կատարած է Հայաստանի կրթաշահմաններու միութեան վարչութեան նախագահ Էդուարդ Մարգարեան: Այս առիթով ան յայտնած է, թէ Սայթ-Նովայի անունը թայտնի է ոչ միայն մեր երկրին մէջ, այլև՝ ամբողջ աշխարհէն: Բնականաբար անհնար է անհամար անուններ ունենալ: Ան ո՛չ միայն բանաստեղծ է, այլև՝ յորինող է, այս զանազան մեծեր որդեկրկնայի նախնիք՝ իր հանճարին շնորհիւ: Կատարած է բանաստեղծական արուեստի մեծ ներդրում: Անոր կրթաշահմանները ունեն իր սրբանշանը, որովհետև նա, այդ արուեստով, ան տեղ մը կ'առընչուի կամբաստանի: Կամբաստան իր բազմաթիւ գործերը ստեղծած է գեղեցկական կերպով: Կրթամբ, մշակչայի անոնց բազմաթիւ արտաբերած է քաղաքային բանաստեղծական մէջ: Սայթ-Նովան ունեցած է գեղեցիկ մայրն է, իրօք, արտակարգ արտայայտիչ մայրն ունեցող մարդ չի կրնար անոր պէս երգել ուրիշ: Բանաստեղծական, կրթաշահման, կատարողական արուեստ. այս երեքը միասին կը կազմեն Սայթ-Նովան երևոյթները: Նստաշրջանի ընթացքին Գրատպարտական, ՕՓՅԵՄ Համբարձումեան, Քուրթիկ Մամբիսեանն է անուանի այլ երգիչներ իրենց կատարումներով տուելի եւս ջերմացուցած են միասնաբար:

Մայրաքաղաքի Հասարակութիւնը մեծ կրթաշահմանութեան է անհնար սիրոյ զգացումով նշան է այդ նշանակալի տարիներու: Սայթ-Նովայի նուիրում հանդիսութիւններն է մասնակցելու համար, ՔիՖԻՔի մասնաճիւղն է Հայաստանի եւ Արարկյանի անուանի գրողները: Ներկայ եղած են նաև վրացի պետական անձնաւորութիւններ:

ՆԱՅԻ՝ ԹԻՖԼԻՍ ՄԷՋ...

Սայթ-Նովայի ծննդեան 275րդ տարեկարծի նախն ունի է ՔիՖԻՔի մէջ: Արարկյան, յորդեան, կրթաշահման երկին տեղի ունեցած է ՔիՖԻՔի Ք. Փալաւովիչի անուն օֆերային մէջ: Վրաստանի

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ  
ՆՈՒԻՐՈՒԱԾ ՑՈՒՑԱՀԱՆՆԵՍԸ

Սայթ-Նովայի ծննդեան 275րդ տարեկարծի նուիրում որդեկրկնային է և անսակաւորութիւններն է մերկն ներս, նաև կազմակերպուած է ցուցանակ(ա մը՝ Հայաստանի ժողովրդական

արուեստի թանգարանի մէջ, ուր ցուցադրուած շուրջ 40 իրականարժէքը պատկերած են մեծ բանաստեղծին և կրկինին փնտաղութիւնը: Պատկերաչարքը ոտանցքը եղած է Սայաթ-Նովան՝ ժողովրդական անձնական արուեստի ներքին ընթացքին, սակցած պրնէկտ: պատու, աշուղներու չեսքը: Նուստարզեան անձնուրէն ընթացքին...  
 Սայաթ-Նովայի նկարաչարքին ներքինին է գեղանկարչի Վարդաշահի էջերէն: 77ամեայ այս նկարիչը ծանօթ է ո՛չ միայն Հայաստանի մէջ, այլև՝ անոր սահմաններէն դուրս:



«ԳԻՐ ՍԻՐԷ, ՂԱԼԱՄ ՍԻՐԷ...»

Սայաթ-Նովայի ծննդեան 275ամեակին աւելի քան մի քանի միասնական անուան զբոսաշրջաններն մէջ տեղի ունեցան է ցուցադրուած մը, իրեն բնարան ու նկարչի Սայաթ-Նովայի «Գիր սիրէ, զալամ սիրէ, դափքար սիրէ, նշանաւոր խոսքեր»:

Ցուցադրուած են բանաստեղծին երկերուն ամբողջ ամբողջը: Հրատարակութիւնները՝ 1902թ թիֆլիսեան տպագրութիւնը, 1905թն Եւրոպայի մէջ տպուած հատորը և 1944թն Ալեքսանդրովնայի մէջ հրատարակուած ժողովածուները, ինչպէս նաև՝ 1905թն Բրուքլինի մէջ Ալեքսանդրովնայի իտալացի թիւրքերու լոյս տեսած հատորն ու այլ հրատարակութիւններ:

Ցուցադրուած են նաև: Սայաթ-Նովայի գիծանկարները, բանաստեղծներու յուսակառուցները, անոր երկերուն նարանքը և բազմաթիւ այլ յուսանկարներ:

ՆՊՊԵԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐԸ՝ ԵՈՁԷՑ ՊՐՈՇԻԻ

21 Հոկտեմբեր 1907ին, Նույնիան գրականութեան մրցանակը շահեցաւ 67ամեայ բանաստեղծ և ընկալաւ Սուլէյմ Քրոնքի, որ կը նկատուի աշխարհագրորդու գտնութիւնը հայկական բանաստեղծ մը:

Սուլէյմ Քրոնքի ծնած է 1840ին, Անիից, Հոնայ ծնողներէ: Բ. Աշխարհամարտի անուոր միանդորտին մէջ հասակ նկատու պատանին, 1865ին, կը ստեղծուի չեստանայ գործընէ և կը նկատուի փնտաղութի ապարկը: Նրջան մը կ'աշխատի գործարաններու, իրազայի մը և մեկնուած մը մէջ, ապա կը գտնուի նուստարի և ինքնուշխատութեան մը կ'ուսանի փիլիսոփայութիւն, հրանկարչութեան մը և ուստեղծուած ու այլ ազգերու գրականութիւն:

18 տարեկան հասակին կը ստորագրէ բանաստեղծութիւններ, որոնք կը մերժուին պաշտօնական լրագրողներու և պատասխանատուներու կողմէ, որուն նշանակեցով կը շահի «Փոփոխութիւն» բանաստեղծութեան:

1864ին, ամենեւեց բանաստեղծը կը գտնուի Երևան քաղաքին: Այս լրագրողներ, Քրոնքի ընթացքները կը հրատարակուին Մ. Նահանգներու մէջ: Արտասովորական գրողներու բողոքներուն իրեն արդիւնք՝ մէկու կ'ուստեղծուի, Քրոնքի կ'արտանուրի վերագտնուել Մոսկուա, ապա՝ Անիից:

1872ին, կ'արտորուի երկրորդ անգամ ըլլալով, բայց այս անգամ՝ զլոյր արտասովորութեան: Քրոնքի կը խնդրէ Անիի Քրոնքի և զինք շխտարչ Թոստանին, սակայն իրենուրի կ'անկար կը մերժեն բնագրայի կը բազմանքին և պարտադրարար հրանկար կ'անել կը ծննդագրուել:

Մ. Նահանգներու մէջ, ուր կը հաստատուի մրտարան բանաստեղծը, կը գործընթաց կ'արձանան թե՛ ընդունելութեան: Իսկ Շուտիկ Նույնիան կ'անուոր, բարձր գեղաստեղծութեան և անդիւրէն լոյս տեսնելով սակցած ժողովրդական գրականութեան, ի միջի այլոց կ'ընդգծէր, թէ Քրոնքի ժրջանակի արժանացաւ իր համապարփակ գրականութեան համար, որ տողորտու է մտքի յուսանկարներ և բանաստեղծական յանուան թափով: Իսկ ինչ կը վերաբերի կը բանաստեղծութեան՝ շնորհուրտ և արժեքաւոր ստեղծագործութիւններ են՝ օտուուած ժամանակի և տարածութեան ընդարձակութեան:

### ԵՈՋԷՑ ԳՐՈՒԹԻ ԿԸ ՄԵՐԿԱՑՆԵ ԹՈՒՐԻՔԻԱՆ

*Այս առումն գրականութեան նպակեան մըցանակաւորք՝ ճագումով նրանց բանաստեղծ Նուրի Պրոքի այնչափ է Քուրթիս եւ այդ առիթով գրի առած է իր տպագրութիւնները, զորս ամփոփած է նաեւ իր մէջ, որ շոյս ընծայուած է նա Նորքի նրատարակչաւորքն ընկալն հոգով: Քուրթիս ներգրան էն այս Հեղինակաւոր գրագրէն ստորագրած ապաւորութիւններն, որոնք կ'ընդգծեն Քուրթիսը ցեղասպան ժողովուրդ մը լլլալու իրողութիւնը:*

«Նիւ Նորէրն Քուրթիս մէջ նրատարակչաւորքն ընկալն կը ճակատեն Քուրթիսը եւ զէլ պատկերով մը կը ներկայացնէ Քուրթիսը: Անա թէ ինչ կը գրէ ահ»:

«Արեւիկին օտարափն ու դառնութեան ցանքը: Անիայ փոշեպատ ազէտը: Միմիայն մարգարէին գորշակն է. որ կամայ է: Այստեղ մարդուն պնդեմն գատ աշինչ կը մեծնայ: Անկցուէնքը կրակի մը, որ մէզով մարած է: Գարշահատուրին: Ազտուտ ծխախոտ, քրտինքի խոտնուած օծաւ, մէջքի փաթեցի պէս փաթեւած մերթնագրաններու խանդուրդ: Փողովուրդը, յանձնուած խոր բմրութեան մը, իր ժամանակը կ'անցնէ ինչն պէս ֆիներու եւ սրծարաններու մէջ: Գրտինքը, նամակի արարողութեան երիզ նակատակ ուղղութեամբ դարձած են զէլի պատկերապատկերն պատուաբ: Այդ պատուաին վրայ մէկը անգաղար ուրիշ մը կը հարուածէ:»

«Պրոքի ոչ մէկ բան կը հուսնէ Քուրթիս մէջ: Պոլսոյ թէլը սիրած է եւ հանկի գտած է անոր անանութիւնը: Բայց այսքան մը ըսելէ ետք, վերջապէս կը շարունակէ իր քննադատութիւնները:

«Ա՛հ, այս անհամար ժամանակը: Մեծմէտնորը: Մուրսուները, Պլագատները, Կարահիմները, Ալիմներն ու Սուլէյմանները: Հայնիին գիմաց անիտուց մարդու մը վարձութեամբ՝ անոնք սպաննած ու շարժած են իրենց նախորդներն ու հակառակորդները, կորայններն ու հայրերը, մայրերը կամ գաւակները: Մուրսուտ Բ. կամ Մուրսուտ Գ. (ի՞նչ տարբերութիւն կ'ընէ) կարգաւ սպաննած է իր 18 կորայնները... Այդ բոլոր փաթեցներն ու մորուքները կը ծածկեն միակ մտածումով մը՝ սպաննող ինկնիցած նայնաման գլուխներ: Բուն պատճառը այն չէ, թէ իսլամութիւնը արգիլած է մկարչութիւնը: Բոլորն ալ աշնան իրարու կը մեամին, որ յայտնի չէ, թէ ա՛յլ անհետացած ու սպաննուած է: Կը սպաննեն, ուրեմն՝ գոյութիւն ունին:»

«Ճագրական տաճարէ մը աւելի հակասութիւն եւ անճանկութիւն չի կրնար լլլալ: Սա

նարանգուի մզկիթները: Սառած շարէ շինւած հսկայ գորտեր, գետին ծածու, անշարժացնը են: Իրապէս մարդուն սպաննացող տեսք մը ունին: ... Եւ այս բոլորը՝ նարանգուի բոլոր շինէրուն պէս, ազտուտ, մոխրագոյն երեւոյթ ըլնում:

«Եւս նարանգուի ա՛յլ թէ տպագրած, այլ անցեալը ճանցնալու եկայ: Հոս տպագայ չկայ: Իրքի տպագայ ինչ որ կայ՝ ամեն բան հիւսիս գաղթած է: Հոս կայ միայն ժողովուրդի ոյմախանձակի, երբորդ զատկարգի արժէք ունեցող մերկան: Ա՞՞՞՞՞՞ ալ աշխոյժ է եւ աշխատատէր, թայց կը բալանուի պատմութեան խտուութեան ղիմաց: Այնու հոս ոչինչ պիտի պատահի: Թնրիւս փողոցային խառնակութիւններ, կամ երկրաշարժ մը: միայն ա՛յստան:»

### ԷՄՄԱ ՊԱՊԻԿԵԱՆ՝ «ԱՆՈՅՇ»Ի ՆՈՐ ՀԵՐՈՍՈՒՂԻՆ

*Հայ Նորարարութեան նուիրուած իւրաքանչիւր արուեստագետուհի կրտսած է մարմնաւորել Արմէն Տիգրանեանի «ԱՆՈՅՇ» օգիտարկի գլխաւոր ներուտուհին կերպարը: Օգիտար մը, որ չի լինուած նամակներէ ի վեր կը զարգայէլ Նրեւանի օգիտարկ խաղացանկը: Նշուած դերով Հանդէս եկած են Հայրհանոյշ Գանդիլեան, Գուրար Գառնարեան, Արմէն Քուրթիսեան եւ ուրիշներ: Ներկայիս այդ դերը կը ժարմուտը էմմա Պապիկեան, որուն առաջին իսկ կոյրները ցոյց տուած են, որ ահ «ԱՆՈՅՇ»-ի սքանչելի մեկնարածն է:*

«Նր հազարակիս մեծ մայնամուտի լոյրարուրային սափրանն»՝ նորա սարքերանց շերտով, անկաշկանց հնչած է ասորիս մայնամուտներու մէջ: Հնարարութիւն տալով լիսին բացայայտուլու ներուտուհին ներայնարիս եւ անոր ապրումները: Յուզիլ կղած է մանուսանց Անոյի խնկապարութեան անտարսը, ուր արուեստագետուհին հանդէս բերած է կերպարի խորութեանց բնկարում, կրածուտութեան տրամաբիւ էութեան նուրբ զգացողութիւն: Էմմա Պապիկեանի թէ՛ կրպիւն եւ թէ՛ խաղարկութեան մէջ կ'արտայայտուի Յովնանդեւ Քուրթիսեանի բանաստեղծական շունչը:

Էմմա Պապիկեանի ծանօթ առումն մըն է կրածուտաներ նարանգուի վեան: Նրեւանի օգիտարկի մէջ ահ մարմնաւորած է գերեր Ռիմոսի կոտակոյթի «Ոստի ակաղազ», Բոսիսի «Անիլան սափրիչ» օգիտարկերուն մէջ: Վերջերս, Նրեւանի ջառհարիս Նրածուտութեան տան մէջ Էմմա Պապիկեան տեսած է կրպանանդէս մը, մեկնարանելով գործեր՝ Բոսիսե, Պելիսե, Վերսիսե, Գլխակայ եւ իայ կրպանանդեներէ:

Էմմա Պապիկեան մայնամարդութեան սկիւած է կրածուտական ու սու մարարներն մէջ, Մեղանիա Մուրսուանի մտտ, ապա մտած է Անիլեկրատի Ռիմոսի կայնակոյթի անուան կրածուտանոցը, զոր աւարտած է փայլուն յաջողութեամբ:





### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝ ԱՐՏԱՑՈՒՄԻ ԱՆ ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Իրազգև Սոցիալական կուսակցությունը, թվ ժողովրդագրամենք իրեն պահան էն առ կի ան-  
բողջական պատկերացում մը կազմելու հայաս-  
տանի պատմության մասին եւ անբողջացնելու  
անյայտ մտացած բազմաթիւ կից:

Սոցիալական հեղափոխում է Հին Արեւելքի մե-  
տաղայն դրամներու նմանքը: Ան մասնաւորա-  
բար անպայտ շան է Հայաստանի մայրաքաղաքին՝  
Արտաշատի կողմէ մետաղագրամներու համար  
փաստը: Մինչ այդ, հայկական ոչ մէկ քաղաք չէր  
նշուած մետաղագրամի վրայ, հակառակ անոր, որ  
մասնազգևներուն համար յատկապէս թվ դրամները  
ա՛յլ էր հատուկին: Ստանձեւեալ եւ ինչ քանակական  
դրամները կողմնորոշիչներ են Հայաստանի պատ-  
մութեան համար: Երկու չորս պատմութիւններու՝  
Իրազգևի կից եւ Ստանձեւեալ երանի միջեւ  
կուսակցութիւնը դարձած Հայաստանը դարձի շարու-  
նակ պայքարած է իր անկախութեան համար:

Սոցիալական կուսակցութիւնը, թվ իրեն իրապա-  
տեակ յատկաբանք, մետաղագրամները պատկերած են  
պատմութեան կարեւոր դրուակներն անանք:  
Արեւելքի, Իրազգևի, որուն վրայ պատկերաց-  
ում է համակարգի գործարար Գերմանիայի կողմէ  
հայտն Արտաշատի թաղաքի մտազգրամի հանդի-  
ստութիւնը: Յատկապէս այդ նպատակով, Գեր-  
մանիայի անանք ժամանակ է Հայաստանի մայ-  
րաքաղաքը, 18 թուին: Այդ իրազգրամի մասն  
մին պատմող մետաղագրամին վրայ կարելի է անու-  
նել հայտն թաղաքի անանքը: Բանի որ Արտա-  
շատեան եւ Արեւելքի նման հարստութիւններու թա-  
ղաքներու հարստութիւնը պատկերած են, այդ  
փորձի նմանք չի կր հանդիսանայ ազգայնա-  
կան արժեքի որ պատկեր թիւններուն համար:

Սոցիալական բազմաթիւ ուսումնասիրութիւններ  
ունի Հայաստանի մէջ գտնուող դրամական գան-  
ձերուն շարքը: Յատկապէս արժեք կր ներկա-  
յայտն շարքի մասնակալ շրջանառութիւնը էին եւ  
միջնադարեան Հայաստանի մէջ գործը:

Սոցիալական ուսումնասիրութեան իրեն այլիւր  
ազգայնաբան ան են Հայաստանի Պատմութեան  
պատկերած թանկարանի մէջ պատմող պատմական  
հարստութիւնը որ մետաղագրամները:

### ՄԱՆԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՄՍԱԳԻՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Վերջերս, Երևանի մէջ յայտնուած է «Մատենա-  
գիտութիւն» ձեռագիրի ամսագրի գիրքը, որը  
հրատարակման պատրաստած է նման Արեւմտեան  
կարգի գրողները:

1881ին, Երևանի մէջ չիմուկեալ հրատարակու-  
ած գրականագիր, Տիգրան Կարապետի գիտու-  
թեանը, որ սկսուած հրատարակել մանկական  
գիրքեր: Այս փոխադրութեան թիւքիս եւ շարու-  
նակից այդ գործը: Իսկ 1883ին յայտնուած անոր  
չիմուած մանկական ձեռագիրը ինչ անպակար, որ իր ան-  
ուսկին մէջ անուսկին ամապիրին էր ոչ ժողով Արե-  
ւելեան Հայաստանի, այլ եւ՝ ոչ Անդրկովկասի մէջ:

Ձեռագիրին աշխատակցած են Չ. Աղայեան,  
Բ. Ֆիլի, Յ. Յովհաննիսեան, Ա. Մատարեան, Պ.  
Պապեան, Ա. Յ. Քանաճեան, Ա. Իսահակեան եւ  
ուրիշներ:

### ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆԵԱՆ՝ ՊՈՒԼԿԱՐԵՐԵՆՈՎ ԵՒ ԼԻՏՈՒԵՐԵՆՈՎ

Հայրենի արձակագիր կարէն Սիմոնեանի թաղա-  
մանու ան գիրքերը հարստացած են նրկու նոր հրա-  
տարակութիւններով:

Վասնայի «Պարզի Բակալով» հրատարակու-  
թիւնը յայտնուած է Սիմոնեանի գրականութիւնի  
մտադրական գերհարգող գիրքը, որ կ'ամփոփէ անոր  
շնորհալի մաման գիտազորքի վրայ, «մոզակալ  
պատմութիւն» վրայից եւ պատմութեանը  
շարք մը Գիրքը հայերեն գրականութեան թարգմա-  
նած է Յակոբ Օրմանջեան:

Կ. Սիմոնեանի «Մատենագիտութիւն» շարքի  
գրական գիրքերը տպած է Կատարի «Վերջապահ»  
հրատարակութիւնը: Թարգմանութիւնը կատար-  
ած է Մարիան Կոնաքիանցի:

ԼՈՅՍ ՏԵՄԱՆ

ԼՈՅՍ ՏԵՄԱՆ

ՎՐԷԺ - ԱՐՄԷՆ

**Ո Ս Տ Ա Յ Ն 1**

— Արձակ էջեր —

- Մոնթրեալ, 1987, հրատարակութիւն՝ Մեսրոպ Մաշտոց հիմնարկութեան, 192 էջ:

---

ՅԱԿՈՒ ՕՇԱԿԱՆ

**ՄԵՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԸ**

— Վերլուծումներ —

- Անթիլիաս, 1987, 100ամեակի հրատարակութիւններ, թիւ 13, 120 էջ:

---

CHOUCHIK DASNABEDIAN

**Zabel Essayan**

**ou**

**l'univers lumineux de la littérature**

- Catholicossat Arménien de Cilicie, Antélias-Liban, 1988.

**ԼԻՔԱՆԱՆ**

Հատավաճառ 100 Լ. Ռ.

Տարեկան բաժնեգին 1000 Լ. Ռ.

**ՍՈՒՐԻԱ**

Հատավաճառ 25 Մ. Ռ.

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆ**

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

**بأكيه**  
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية  
المدير المسؤول  
السيد ارنين كارنيك قزائحيان

•

**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISIQUE

Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

•

**Բ Ա Գ Ի Ն**  
ԱՄԱՍԳԻՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր  
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրութեան անդամ  
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

B. P. 80896 - Beyrouth - Liban  
Tél. 266740

